Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՏԱՐԵՐԱՅԻՆ

Ես այդ ժամանակ ապրում էի Լոզանում: Հին ուսանողներից մեկն էի, բայց համալսարան չէի հաճախում: Եվ ինչպես հաճախեի, երբ ոչ թե միայն համալսարանի վարձը չէի կարողանում տալ, այլև հացի փող անգամ չունեի:

Սենյակս քաղաքի հյուսիսային ծայրին էր. մի փոքրիկ տուփ, որի մեջ տեղավորվել էինք մահճակալս, փոքրիկ սեղանս, միակ աթոռս և ես, եթե, իհարկե, տանն էի լինում ես: Բայց այդ օրերը ես դադարել էի տուն ևս հաճախելուց. պատճառը այն տոմսակներն էին, որ տանտիկինս համառորեն դնում էր սեղանիս վրա: Զարհուրելի տոմսակներ, որոնց բովանդակությունը ցնցում էր ինձ ամեն անգամ, երբ հոգնած, սոված, անվերջ թափառումներից տուն վերադառնալիս՝ կարդում էի:

Ամիսն անցել էր. իսկ ես ոչ մի սու չէի վճարել տանտիկնոջս: Իսկ թե երբ պետք է վճարեի, այդ ոչ ոք չգիտեր:

Ես այն ուսանողներից չէի, որ կանոնավոր փող են ստանում ամեն ամիս. ոչ էլ նրանցից, որ անկանոն են ստանում: Ես ոչ ոքից ոչինչ չէի ստանում:

Հայրենիք դառնալու միտքը դժվար էր թվում, ինչպես մի ահագին լեռ, որ պետք է բարձրանաս և իջնես: Իսկ մնալը ավելի ևս զարհուրելի էր: Ասենք այդ տեսակ բարդ խնդիրների մասին շատ էլ չէի մտածում: Դրանք այն հարցերից էին, որ կախարդական շրջանակի պես՝ արդեն վաղուց ինձ հուսահատեցրել էին՝ իբրև անկարելի հարցեր: Ես ունեի միայն օրական հարցեր. տանտիկինս, որին պետք էր մի կերպ համոզել, որ սպասի, և ստամոքսս, որինևս պետք էր համոզել որ սպասեր: Երկրորդն ավելի համբերատար էր. վերջապես նա իմ սեփականն էր. կարող էի ստիպել, տանջել, մեռցնել: Բայց տանտիկինը, այդ զարհուրելի շվեյցարուհին. Աստվա՜ծ իմ, ի՜նչ սոսկալի էր այդ կինը, այդ տգեղ, պրոզայիկ, փորը ուռած, փայտե կոնքերով, մսոտ երեսով, խոհանոցի հոտը միշտ վրան, միշտ լուրջ և ինքնագոհ կինը: Տան մեջ ես և նա հիանալի հասկանում էինք մեր ամեն մի շարժումը: Առավոտը շատ վաղ քաղցը արթնացնում էր ինձ. աչքերս բաց էի անում և զայրանում: Մռայլ, սովորական տպավորություններ: Առաջի առարկան, որ մեխվում էր աչքիս մեջ,— դա տանտիկնոջս ամուսնու լուսանկարն էր: Ինչքան է զայրացրել ինձ այդ մարդը, այդ կուշտ, ինքնագոհ շվեյցարացին, կլոր կզակը մաքուր ածիլած, հաստ բեղերը դեպի վեր սրած, զինվորական համազգեստով, հրացանը ծնկների մեջ, ապուշ հայացքը մի կետի հառած՝ այդ ամեն օր նախաճաշող, ճաշող, ընթրող կուշտ մարդը: Թքում էի ու շուռ գալիս մյուս կողքիս. փակում էի աչքերս, որ քնեմ, երկար քնեմ, մեռնեմ, չլինեմ…

Բայց մահճակալը ճռռում է իմ շարժումից. անշուշտ, տանտիկինս արդեն լսում է. տանից փախչել՝ առանց նրան հանդիպելու՝ անկարելի է: Իսկ այդ անհրաժեշտ է: Ուրեմն պետք է ճարպկություն բանեցնել. սուս ու փուս հագնվել և անձայն ծլկվել տանից։

Աստված իմ, եթե այդ հաջողվի՝ մինչև երեկոյան ժամի 10, 11, 12, մինչև անգամ 12 ազատ եմ սոված թափառելու: Գոնե ոչ ոք չի իմանա սոված ությունս, ոչ ոքից պահանջ չեմ ունենա, ոչ ոք ինձանից չի պահանջի:

Զգույշ, ծանր շարժվածքով նստում եմ անկողնիս մեջ:

Ոտներս արդեն հատակի վրա են: Դեռ չհագնված նայում եմ սրունքներիս. աստված իմ, որքան նիհարել եմ: Նայում եմ ու չեմ հավատում: Միթե՞ ես էլ եմ շուտով ներկայանալու կանտոնի հիվանդանոցը իբրև թոքախտավոր… Հըմ. գիտեմ ինչպես կընդունեն ինձ: Նախ կհարցնեն. «Ինչպե՞ս են ձեր ծնողները, ձեր հայրը քանի՞ տարեկան հասակում մեռավ, իսկ ձեր մայրը՞. արդյոք հազո՞ւմ եք,

գիշերները քրտնո՞ւմ եք»: Հետո կքննեն կուրծքս,առջևից, հետևից, հետո կասեն, ասա՝ «trente trois», հետո կասեն հագնվիր և վերջը անտարբեր տոնով կասեն. «Այո պարոն, ձեր ենթադրությունը սխալ չէ. ձեր թոքերում պրոցես կա, պետք է բժշկվել: Գնացեք Դավոս»: Հըմ Դավոս… Բայց պետք է վերջ տալ այդ դրության: Թու, ինչ զզվելի մտքեր: Չէ, այսօր անպատճառ կվճռեմ մի բան, բայց թե ինչ. դե ես ինչ գիտեմ, մի բան: Մի անորոշ հույս աշնան արևի նման, նվազ փայլում է կյանքիս ամպերի մեջ, և թեև չի տաքացնում ինձ՝ բայց զգում եմ որ նա կա. նա, այդ հույսը, փրկությունը): Անձայն հագնում եմ շորերս, բոբիկ ոտներով մոտենում եմ լվացարանին, վերցնում սափորը և այնպես զգուշությամբ, կաթիլ-կաթիլ ջուրը ածում կոնքի մեջ, որ ոչ մի ձայն չի դուրս գալիս, ձեռներս մի քանի անգամ կոխում եմ ջուրը, Հետո կամաց հանում, կպցնում եմ երեսիս, և լվացվելս դրանով վերջանում է: Ջրի թարմությունը կենդանացնում է ինձ, և ախորժակս բացվում է: Եթե մի կտոր հաց լինե՛ր: Բնազդմամբ բաց եմ անում պահարանս, բայց ներողություն կանես, այնտեղ ոչինչ չկա: Այդ կրկնապատկում է մեջս ապրելու պահանջը: Նայում եմ պատուհանից դուրս: Արևը իր ոսկի լույսը փռել է մոտակա անտառի բացատի մեջ: Այնտեղ շվեյցարական հսկա կովը ախորժակով արածում է՝ դանդաղ զնգացնելով իր հաստ վզի զանգը:

Ինչքա՜ն երջանիկ է թվում ինձ այդ անասունը. ոչինչ չունի վճարելիք և սպասելիք. ամենաապահով արարածը Շվեյցարիայում:

Իսկ ե՜ս, իդեալիստս, գիտության ծարավս…*):

Քանի ամիս է չեմ կշտանում, ուր մնաց թե ապահով լինեի: Խոհանոցից պնակների ձայներ են գալիս, դա նա է, ամենակարող տանտիկինս. հանգիստ պատրաստում է իր նախաճաշիկը: Սուրճի և կաթի հոտը թափանցում է սենյակս, պետք է փախչել և ազատվել դրանից:

Բայց դա հեշտ խնդիր չէ, պետք է անցնել խոհանոցի առջևից և եթե դուռը փակ է՝ բանալ նախասենյակի դուռը, և եթե սոսկալի էակը այդ ձայներից սթափված ինձ չկանչի՝ ծտի պես ազատ եմ: Հանկարծ ներքևի հարկի պատուհանից լսվում է հարևանուհու ձայնը. «Տիկին Ռոժե»:

Փրկվա՜ծ եմ: Տանտիկինս վազում է դեպի խոհանոցի պատուհանը իմանալու համար թե ինչ կա: Ես սատանայի պես ծլկվում եմ:

Հաղթությո՜ւն. ես փողոցումն եմ և ամբողջ օրն ազատ: Այդ չնչին հաջողությունը հուսադրում է ինձ: Լիակուրծք շնչում եմ և շվացնում մի եղանակ: Ախորժակս և՛ տանջում և զվարթացնում է ինձ: Իջնում եմ շուկան): Ի՜նչ ուրախ, հանգիստ է շվեյցարական շուկան: Աչքս ամենից առաջ ընկնում է խմորեղենի խանութների վրա, և իսկույն ընդգրկում մորիով պատրաստած մեծ փոքր հաղարջները: Կանգնում եմ ապակու առջև*. նայում ներս: Եվ զարմանալի բան. այդ անում եմ ավելի իմ առաջ չստորանալու համար: Այո՛, այո՛, ինչպե՞ս չէ: Ես հո այդ աստիճան ընկած չեմ: Եվ վերջապես ի՞նչ երեխայություն է. քաղց. եղածն ի՞նչ է: Կերար կշտացար՝ պրծավ. էլի այն մարդն ես, այն մտավորականը: Թո՜ւ ինչ հիմար բան: Արագ շարժումով իջնում եմ ցած նեղ փողոցով դեպի փոստը: Ներքին մի ուժ մղում է ինձ դեպի այնտեղ: Այսօր փողը եկած կլինի: Մտնում եմ փոստի շենքը: Ահագին իրարանցում կա այնտեղ: Մարդիկ լուրջ դեմքերով անցնում են մի բաժանմունքից մյուսը, կանգնում պատուհանների առաջ, նամակ հարցնում, տալիս, իսկ ցանցերի հետևը ահա լսվում է արծաթե և ոսկե դրամների համաչափ զնգզնգոցը, որ ոչ մի բոպե չի ընդհատվում: Հաշվում են: Չգիտեմ ինչու ներքին ձայնս ինձ ասում է, որ այդ դրամներից մի քանիսը իմն է: Այսօր անպատճառ պետք է ստանամ: Պիտի ստանամ, որովհետև այսօր 25-րդ օրն է, որ նամակ եմ գրել Կովկաս՝ մոտիկ բարեկամներիցս մեկին և փող խնդրել: Նամակը պատվիրած էր. ուրեմն տասը օր թող գնա, տասը օր՝ գա, իսկ հինգ օրը գցում եմ մտածելու, վճռելու, դրամ գտնելու և ինձ ուղարկելու: Եվ վերջապես այն նամա՜կը, որ ես գրել եմ: Վճռական քայլերով մոտենում եմ պատուհանին*): Պաշտոնյայի հայացքը ընկնում է վրաս: Ես դրան էլ մի առանձին

նշանակություն եմ տալիս, որովհետև ամեն օր նրան դիմել եմ նամակ հարցնելով և ամեն օր կրկնել ազգանունս, նա ինձ անշուշտ գիտե: Առանց մի խոսք ասելու մոտենում է դարակներին և ինչ-որ փնտրում այն տեղ: Հը՞ կարծես բան կա: Նայում է նամակների հասցեներին:Ահա կանգ է առնում մի հասցեի վրա, կարծես դժվարանում է կարդալ: Ուզում եմ գոռալ ազգանունս:

— Մի նամակ միայն կա, տիկի՛ն,— խոսում է հանկարծ պաշտոնյան և ես զարմանքով նկատում եմ իմ կողքին կանգնած մի մոմեղեն պառավ կնոջ, որ տոհմիկ նուրբ ձեռքը դրած մարմարե պատվարի վրա՝ սպասում է նամակին: Ուրեմն ինձ համար չէ՞ր նայում: Շտապով գրում եմ ազգանունս և ներկայացնում ծառայողին: Նա կարծես արհամարհանքով և ձանձրացած կարդում է ազգանունս և այնպես դանդաղ շարժումով մոտենում դարակներին, կարծես աննպատակ և իզուր գործ անելիս լիներ: Ահա նայում է նամակներին, բայց ինձ թվում է թե հասցեները չի կարդում: Դիմում եմ նրա դեմքը: Կարեկցության ոչ մի հետք: Այդ ուղտագույն մազերի տակ, այդ կանոնավոր, նեղ գանգի մեջ երբեք չի կարող շարժվել այն միտքը, թե ինչքան ուզում եմ ապրել և ինչքան հոյակապ հղացումներ կան հոգուս մեջ. գիտի՞ նա որ ես «Ճառագայթ»-ի աշխատակիցն եմ*), քննադատ, գոնե մեծ ապագա խոստացող քննադատ: Գիտեմ ինչ կոպտությամբ կմերժեր ինձ այդ մարդը, եթե հանկարծ խեղճանայի և նրանից մի կտոր հաց խնդրեի: Օ՜, օ՜… աստված ազատի:— «Ոչինչ չկա», մրթմրթում է նա, իր արհեստին հատուկ սառը մեքենայականությամբ և անցնում մյուս բաժինը:

Սառը քրտինքը պատում է ճակատս:

Ի՜նչ, ուրեմն հինգ օրը բավական չէ՞ հասկանալու, որ ես նեղ դրության մեջ եմ. ես, որ այնքան գեղեցիկ հղացումներ ունեմ հոգուս մեջ: Ես, որ «Ճառագայթի» աշխատող… Թյո՛ւ: Եվ կարո՞ղ է պատահել, որ նամակս ստացած չլինի: Երևի. գուցե բացակա է քաղաքից: Բայց ինչ որ է, սա մի անորոշ բավիղ է, որի մեջ մոլորվում եմ և սատանան գիտե որ այսպես գնալով ո՞ւր եմ հասնելու): Միրտս խառնում է ավելի բարկությունից քան սովից: Տե՛ր աստված, ո՞ւր գնամ: Քաղաքում ուսանող չի մնացել, բոլորը ամառանոցներն են: Եթե մնացած էլ լինի՝ գնալը չարժե: Ճիշտ է, մնացողն էլ աղքատի մեկը պիտի լինի, թեև ինձանից անհամեմատ հարուստ, բայց փորձել եմ դրանց հացը. շատ դառն է. ուստի և չեմ գնում նրանց մոտ:

Բայց մի բան պետք է վճռել, պիտի այս խայտառակության վախճանը գտնել: Եվ կոշտ տանտիկինս միտքս է ընկնում, և զգում եմ, որ քայլերս արագանում են: Չգիտեմ ուր եմ գնում*): Զգում եմ որ չպիտի կանգնել, պիտի շտապել, և ես վազում եմ. վազում եմ մի դեղ, մի ճար անելու. Բարև, Ալպերի փերի, ուզում եմ բայց ձայնս դուրս չի գալիս: Փսփսում է մեջս, բերանս չոր է: Հասել եմ Ուշի: Արագ անցնում եմ նավամատույցի ծայրը և քթին կանգ առնում: Կուրծքս ցցած նայում եմ. դեմս երկնակապույտ Լեմանն է և նրա մյուս կողքին արձանացած Սավոյական Ալպերն են, որ անշարժ կեցել են իրենց ձյունե թիկնոցներով: Ա՜խ, ինչպես կգրկեի այդ բոլորը, և կրծքիս լայնության մեջ ամեն ինչ կպարփակեի, եթե միայն սուրճ լինեի խմած և վրան կարագով հաց կերած: Թյո՛ւ, ինչ պրոզա, ի՜նչ հիմարություն. մի կտոր հաց անգամ չունենալ: Հաց տվեք, հաց, շան որդի՛ք, հա՜ց — գոռում եմ. բայց ձայնս հազիվ է դուրս գալիս: Հետ եմ նայում և տեսնում, որ երկու անգլիացի դիտակները ձեռներին կանգնել են ետևս: Եվ որպեսզի խոսելս չլսեն ու ինձ խելագար կարծեն՝ սկսում եմ նույն բառերով երգել. «Հ ա ա ց տվեք հ ա՜ ա՜ ց, շան որդիք»: Եվ հեռանում եմ: Եվ հիմի էլ չեմ գնում, այլ քայլերս են ինձ տանում, և դեպի ո՞ւր, չգիտեմ: Մեքենաբար եմ նայում առաջս, բայց չեմ տեսնում*: Ճեմելիքում զբոսնող զույգերն ու հատ հատ մարդիկ, որ անշուշտ նախաճաշել են, ուղղակի վայելում են հրաշալի եղանակը: Կանայք իրենց գույնզգույն զգեստներով նման են հսկայական ծաղիկների: Նրանք մոտովս անցնում են ինչպես մի գեղեցիկ երազի մեջ: Ահա մի ճերմակ, հսկա ծիծեռնակի թևով դողում է Լեմանի լճի կապույտ սառած հայելիին — դա առագաստանավն է: Ահա Էվիանը — ֆրանսիական քաղաքը — հազի՜վ նշմարվում են նրա տնակների ճերմակը: Ի՜նչ խաղաղ է կապույտ կանաչ բնությունը: Շուտով այս մեղմօրոր ափը

կլցվի ամբողջ աշխարհից եկած օտարականներով: Մի քանի օրից հետո երջանիկ բարեկեցիկները կշտապեն լեռների հովասուն անտառները ամառն անց կացնելու: Իսկ ես ի՞նչ պիտի անեմ սենյակիս վարձը, պիտի գտնե՞մ մի կտոր չոր հաց ուտելու: Երանի այդ բոլոր գեղեցկությունները իբրև երազ ցնդեին և զարթնելով ինձ տեսնեի մի բակի մեջ, հացի սեղանիառաջ: Գոնե մի րոպե: Ինչ եմ ցցվել այս գեղեցիկ ափին իբրև տխուր սովածության ասպետ: Ստամոքսս դռվռում է. ի՜նչ անհերդաշնակություն շրջապատիս գեղեցկության հետ: Եվ ի՞նչ ճակատագիր է. նստել բնության հրաշալիքների կողքին իբրև տխուր հակադրություն, մտածել միշտ միևնույն պրոզան, հացի միևնույն անփոփոխ մտապատկերը աչքի առաջ: Եվ մի՞թե ուրիշ բան չկա մտածելու: Բայց և մի՞թե կարող եմ ուրիշ բանի վրա մտածել: Գոնե մի կտոր հաց լիներ: Ի՜նչ հրճվանքով այս նստարանին նստած՝ կուտեի և կդիտեի աստծու գեղեցիկ աշխարհը: Գոնե մի կտոր հացի կե՛ղև լիներ: Բայց որտեղի՞ց: Եվ վերջապես ի՞նչ պիտի լինի իմ վերջը: Ժամի 10-ն է երևի: Մնալ լճափին, որևէ հույսով՝ անմտություն է. բարձրանալ դեպի քաղաք՝ դժվար. մանավանդ այս սովածության: Չէ՛, պետք է համենայն դեպս գնալ քաղաք: Այստեղ ո՞ւմ պիտի պատահեմ: Վճռում եմ գնալ և իսկույն ընկնում լճափի նստարանին: Չգիտեմ հոգնած եմ, թե կոտրտված: Լճի հովը խաղում է երեսիս*): Հաճելի խոնավ շունչը հայացքս քաշում է դեպի մի նավակ, որ հանգիստ սահում է լճի կապույտ հայելու վրա: Չեմ տեսնում զբոսնողներին, մինչ երկու պանամա եմ նշմարում այդ կարևոր էլ չէ: Նրանք գնում են լճի խորքը: Ովքե՞ր են, չգիտեմ, բայց բանն այն է նրանք կուշտ են այս րոպեին: Դիմացի ափից, Էվիանից մի նավ է գալիս: Կապույտ օդի մեջ հաշվվում է նրա գիսախռիվ ծուխը: Ահա երկաթուղու գնացքի սուլոցը: Մեկնում է դեպի Միլան: Երևի դեպի Միլան: Հապա ո՞ւր: Նախ Վվե, հետո Մոնտրեռ, հետո Միլան, հետո էլ գրողի ծոցը, մահի շալակը, շան որդիք: Իհարկե, որովհետև քեզ համար շատ հետաքրքիր է, թե ուր է մեկնում: Հաց գտիր, հաց, շուտով կսատկես և չես իմանա, թէ գնացքները ուր են մեկնում:

Վեր եմ թռչում տեղից և վազում դեպի նավամատույց: Եվ շատ լավ եմ անում: Շուտ արա, նավը մոտենում է, գնացքը կփախցնես. չէ, պետք է նստես գնաս Մոնտրեռ, այնտեղ ճաշելու: Ինձ հետ վազում են և ուրիշները: Մի խումբ շքեղ հագնված երիտասարդներ առաջ են ընկնում: Ինչպե՞ս. ինձանից առա՞ջ. ես, որ ամենակուշտ արարածն եմ այս լճափին: Ապա տեսնենք, ապա, ապա, ապա — և քայլերս արագացնելով նրանցից առաջ եմ անցնում: Տեսա՞ք եսասում էի, որ ես ամենակուշտ արարածն եմ այս լճափին: Հա՛, հա՛, հա՛: Ահա նավը ոռնաց. շուտով կմոտենա նավամատույցին: Բազմությունը գնում դեմ առնում երկար շղթային, որ քաշում են նրա առաջ, դիմացը, նավի ու բազմության մեջ մի փոքրիկ հրապարակ թողնելով*: Ժանդարմը առաջ է գալիս և կանգնում այդ հրապարակում: Ես ընկղմած եմ այդ բազմության մեջ և այնպիսի լրջությամբ սպասում եմ նավին, կարծես ոչ մի հոգս չունեմ: Մի շիկահեր աղախին է կանգնած մոտս, գրկին մի կապտաչյա երեխա, որ շոկոլադ է ծծում: Ի՞նչ գայթակղություն: Կարմրահեր աղախինը կոշտ հայացքով մի րոպե դիտում է իր գրկի երեխին և հետո հետաքրքիր աչքերը ուղղում նավի կողմը: Ես նայում եմ երեխի բերնին և աշխատում հիշել շոկոլադի գրգիռը լեզվիս վրա: Մի վայրկյան թվում է թե զգում եմ նրա լպրծուն կոշտը և քաղցրությունը դառնահամ: Աղախինը ինձ է նայում. ես սթափվում եմ և դեմքիս լուրջ ու կուշտ արտահայտություն տալիս: Ես ամենակուշտ արարածն եմ այս լճափին: Օ՜հ, ինչպես չէ: Ապա տեսնենք ովքեր են գալիս: Նավը հևալով մոտենում է: Անիվը հետ է շուռ գալիս և փրփրած արծաթե դրամները խառնելով ետ մղում իրանից: Ջուրը խշշում է ու դղրդում: Նավից պարան են գցում նավամատույց: Հաղթանդամ, սևահեր մի տղամարդ ձեռքով որսում է պարանը և հապճեպով փաթաթում նավամատույցի թաց ցցին: Նավը կանգնում է: Կամուրջ են գցում նավամուտքին: Ճամփորդները դուրս են խուժում և լցվում նավամատույց: Ահա մի շարք հոսում է, գալիս անցնում է մեր առջևից: Մեծ մասը ճամփորդներ են. հարուստ, ուրախ, կուշտ, հետաքրքրվող: Դիտում եմ մեկ-մեկ բոլորին, և փոխարենը ոչ մի հայացք չեմ ստանում: Եվ ինչո՞ւ ստանամ: Ես ո՜վ, նրանք ո՜վ: Ես սոված, անդրամ արարածս, որ շուտով պիտի խորտակվեմ այս անհավասար կռվի մեջ, իսկ նրա՞նք. նրանք դրամ ունեն.— ուրեմն և ամեն բան ունեն: Նրանցն է նավը, լիճը, արևը, սավոյական Ալպերը, աղջիկն ու գինին: Կուզենան՝ կճաշեն կընթրեն,

կպարեն, կջարդեն և աշխարհի հերը կանիծեն: Օ՜հ, ի՜նչ մեծ ուժի տեր են նրանք: Խառնվում եմ նրանց հոսանքին և հեռանում նավամատույցից: Մի քանի քայլ ևս, և ահա ֆունիկուլյորը: Արդյոք չէի՞ք կամենա, հարգելի սոված, ֆունիկուլյորով բարձրանալ: Ֆու,ի՞նչ պրոզա: Ո՛չ, ես ատում եմ քաղաքակրթության բոլոր միջոցները. ես սեփական ոտներով կբարձրանամ. այդ և բնական է և ռուսսոյական: Օ՜, ինչ դժվար է բարձրանալ: Աստված իմ, որտե՞ղ ես, հասի՛ր, տուր ինձ մի քանի սանտիմ, ինձ, քո ստեղծած կավին: Եվ ո՞վ խնդրեց, որ ինձ անպատճառ ստեղծես, և ինչիդ է պետք իմ այս չարչարանքը և քարշ գալը: Եվ ո՞ւր եմ գնում. ո՞ր ջհանդամը, ո՞ր մահի ծոցը: Բայց պետք է գնալ, պետք է բարձրանալ քաղաք, թեկուզ հենց նրա համար, որ չի կարելի մնալ միևնույն տեղը: Երևի իմ դերն էլ այս տիեզերքի մեջ այդ է: Այո, իմ դերը, իմ խորհրդավոր դերը, հա՜, հա՜, հա՜,— ծիծաղում եմ, և զգում, որ դեմքս չի ծիծաղում: Շոշափում եմ դեմքս. քունքերս ցցվել են: Նիհարել ես, սիրելիս, նիհարել. տեսնողը իսկույն կասի որ սոված ես և դեմքը շուռ կտա, որ չմոտենաս*): Ձեր հերն անիծած. ձեզ լինի ձեր փողն էլ, ձեր հացն էլ, ձեր ամեն ինչն էլ: Ա՜խ, եթե մի կտոր, մի ամենափոքրիկ կտոր հաց լիներ: Արդեն կեսօր է: Ամբողջ Շվեյցարիան հիմի ուտում է, տրաքվում, իսկ ես քաշ եմ գալիս արևի տակ, հոգնած, սոված, արհամարհված, ամենից մոռացված. Ես, որ այնքան հոյակապ հղացումներ ունեմ գանգիս մեջ և «Ճառագայթի» թղթակից եմ. ես քննադատս: Ամոթ է մտածելն անգամ, որ ինձ նման մեծ ապագա խոստացողը մի 5 սանտիմանոց չունի գրպանում: Մի՞թե ապուշի մեկը մի 5 սանտիմանոց էլ կորցրած չի լինի այս սալահատակի վրա: Մի 5 սանտիմանո՜ց, ձեր հոգուն մեռնեմ, միայն 5 սանտիմանոց: Բայց ո՞րն է այն ապուշը: Ես եմ, ես, այդ ապուշը, որ ոչինչ չունեմ կորցնելու:

Երկաթուղու կայարանն եմ հասել: Շտապ քայլերով մտնում եմ ներս և դուրս գալիս պլատֆորմ՝ այն ձևով, կարծես հենց այս է գնացքով ծանոթ մարդ է գալու և ինձ տալիքն առաջարկելու քսակով թե. «Առայժմ այսքանը վերցրեք, մնացածը հետո»: Օ՜, ո՛չ , պարոն Գուլամիրյան, ինձ միայն մի ֆրանկ է պետք. նեղություն մի կրեք. ո՛չ, ո՛չ, ո՛չ, ես միայն այնպես… քսակս տանն եմ մոռացել, հենց այս երեկո կվերադարձնեմ…

— Զգույշ,— գոռում է ականջիս երկաթուղու ծառայողը և թևով հետ քաշում: Ցյուրիխի գնացքը դղրդալով կանգ է առնում: Վագոնների դռները իսկույն բացվում են և մարդիկ լեղապատառ դուրս են լցվում վագոններից:

Գուլամիրյանը այս անգամ չկա, պարոն սոված, նեղություն հետևիցս և ձեռքի սայլը դղրդալով տանում է կառապանը զամբյուղներ ու սնդուկներ: Վվե, Մոնտրեռ, Վիլնյով, Միլան,— գոռում է շվեյցարը: Նոր գնացք է գնում դեպի ջհանդամը և կարևոր է, որ անպատճառ ես այստեղ լինեմ և ճամփու դնեմ: Ախր ինչպես կարելի է, որ գնացքներն առանց սոված մարդու թույլտվության շարժվեն, մանավանդ Միլան գնացողները, մանավանդ Միլան, մանավանդ Միլան, Միլան, ձեր հերն անիծած: Բայց պետք է վերջ տալ այս գնացքներին, պետք է վերջ տալ, հասկանում ես, վե՜րջ, վեվ, է, րե, ջե, շան որդիք, վերջ: Վազում եմ դուրս և քրտնած, հոգնած, կարմրած վազում դեպի Սեն-Ֆրանսուա հրապարակը: Շտապում եմ, կարծես եթե մի րոպե ուշ հասնեմ ուզած մարդս այնտեղից պիտի փախչի: Շուտ արա, ինչպե՞ս չէ: Թվում է, թե այնտեղ ծանոթ մարդ պիտի լինի, որից կարելի կլինի մի տասը սանտիմ պարտք վերցնել: Աստված իմ, գոնե մի՛ անգամ գթա. թող լինի՛ այդ մարդը. չուզեցի քո այս համաստեղծությունը, թող արեգակը այդքան հարուստ չլինի մոլորակներով, թող երկրագնդերը սակավ լինեն այս կապուտակ տարածության մեջ, ինչի՞ս պետք Սատուրնը, Նեպտունը և Արջային համաստեղությունը, թող լինի այդ մարդը Սեն-Ֆրանսուա հրապարակում, փոստի առաջ ինձ պարտք տա 10 սանտիմ: Այդպես կարգադրիր, աստված. հետո կուզես կաթոլիկ կդառնամ, կուզես՝ հեթանոս: Հնում եմ, քրտինքը խաշում է վիզս և թրջում կեղտոտ օձիքս. այդ ոչինչ. միայն թե 10 սանտի՛մ… Ո՛վ Եհովա, ո՛վ Յահվե, այդ ոչինչ: Թրջիր օձիքս, այրիր կուզես, միայն թե տասը սանտիմ, մի ակնթարթում կվազեմ հացթուխի մոտ, կհրամայեմ որ վայրկենապես հացը շպրտի իմ կողմը, կառնեմ և մի անգամից

բերանս կխրեմ, կխեղդեմ, շան որդիք, միայն թե 10 սանտիմ: Վազում եմ փոստի կողմը: Բայց սա ի՞նչ խայտառակ բան է: Ո՞վ հայրենասեր շվեյցարացիներ, ով սյուիզներ, ո՞ւր է այն մարդը, այն մարդու հերն անիծած. օ՜ֆ, հիմի կփռվեմ այս հրապարակի վրա և կուտեմ բոլոր քարերը, ո՞ւր է այն մարդը: Զգում եմ, որ գլուխս պտտվում է: Վազում եմ տրամվայի կայարանը և ընկնում նստարանի վրա: Մի անզգացություն է գալիս վրաս.կատարյալ անտարբերություն: Նայում եմ շուրջս, հրապարակը դատարկ է.— Ճաշի ժամ է:

Սևազգեստ ժանդարմը միայն կանգնած է կայարան տանող զառիվայր փողոցի գլխին. հատ-հատ անցորդներ շտապում են, թերևս ճաշի, և տրամվայն է, որ անդուլ գնացքով աղմկում է հրապարակի խաղաղությունը: Ոչ մի բան հոգումս չի շարժվում, կարծես ոչնչացած լինեմ. կարծես մարդիկ իմ շուրջն ապրում, շարժվում են մի հոգատար ձեռքի շարժումով, և միայն ես եմ, որ դուրսն եմ մնացել, զրկվել, մոռացվել այդ հոգատար ձեռքից:

Սովածությունս մեղմացել-բթացել է, հոգնածությունս փոխվում է քնի: Կատարելապես մենակ եմ զգում աշխարհում: Երևի ոչ մի արարած այս րոպեիս չի մտածում իմ մասին, ոչ այստեղ, ոչ Կովկասում: Եվ այդ մենակությունը, լքվածությունը դուր է գալիս ինձ: Ոչ ոք չի մտածում իմ մասին. ոչ ոք: Չեմ էլ ցանկանում, որ մտածեն: Այդպես լավ է, որովհետև արժանի եմ դրան: Որովհետև ես ինքս չեմ մտածում իմ մասին: Եթե իմ մասին մտածող լինեի՝ անշուշտ այստեղ անօգնական նստած չէի լինի, ինչպես մի լքված մուրացիկ, մի անպետք փալաս: Եվ վերջապես ինչի՞ եմ նման. Ի՞նչ արժեմ այս րոպեիս.— ոչինչ: Եթե արժեի՝ պետք կածեին: Պետք չեն ածում, ուրեմն՝ ոչինչ չարժեմ: Այո՛, պարոն սոված, այդպես է: Այ տեսնո՞ւմ ես այն լրբադեմ ծերուկը, որ քոստքոստալով անցնում է փոստի առաջով. երևի հասասու է. կյանքը քամել է գիշերային օրգիաների բաժակում և մզված կմախքով ընգլնգում է: Բայց քեֆդ քյոք պահի. այդ մզված կմախքը ապահովագրված է*, ախր ինչպե՞ս կարելի է, որ այդ անկյանք ծերության տոպրակը դեռ քարշ չգա փոստի առաջով և Եվրոպայի ու մարդկության պատմության մեջ ահագին բաց տեղ թողնի: Ճաշի է գնում, որ պատմության էջերը չվտանգվեն: Չարությունից դեմքս կծկվում է: Այո, սիրելի սոված, քո երիտասարդությունը ոչ մի գրոշ չարժե և պատմությունը առանց քեզ յոլա կգնա: Դու մեռնելուդ դարդը քաշի. ամեն բան հեշտ է: Այո՛,— գոռում եմ ես, բայց ձայնս դուրս չի գալիս,— մեռի՛ր և տեղ տուր այս զզվելի տոպրակին:— Բարև, զզվելի տոպրակ,— ասում եմ ծերուկին հայերեն: Նա զարմացած ինձ է նայում, բայց էլ չի երկարացնում, բարևում է նույնպես ևանցնում: Ասացե՛ք խնդրեմ,— շարունակում եմ նրա հետևից հայերեն,— որտե՞ղ եք թաղելու ձեր տոպրակը*):— Նա կանգ է առնում.

— Ի՞նչ եք ցանկանում, պարոն:

— Ոչինչ, պարոն, իսկ դուք ի՞նչ եք ցանկանում:

— Ինձ թվաց, թե դուք ինձ հետ խոսում էիք:

— Ինձ էլ թվաց: Ցտեսություն, հարգելի պարոն, bon appetit!

Ծերուկը զայրանում է և փնթփնթալով ճամփան շարունակում: Ես մնում եմ իմ տեղը: Ծերուկը դեռ օրորվում է և իջնում թատրոնի փողոցով: Գնում է առանց ետ նայելու: Նրա զայրույթն անցել է երևի. իմս սկսեց: Բայց ինչո՞ւ զայրացավ վրաս: Հանկարծ վեր եմ թռչում տեղիցս: Ինչո՞ւ զայրացավ: Մի՞թե իրավացի չէր իմ հարցմունքը: Մի՞թե հավիտյան պիտի լնգլնգա աշխարհիս երեսին այդ զզվելի տոպրակը և շարունակ տրաքվի: Ինչացո՞ւ է որ չի ջհանդամվում: Աստված իմ, ինչքա՜ն պետք է եղել քեզ այդ կեղտով լի տոպրակը և ինչքան անպետք եմ ե՛ս, այս երիտասարդս, այս ախորժակալի, կենսալի էակս, որ այնքա՜ն գեղեցիկ հղացումներ ունեմ գլխիս մեջ և թյո՜ւ, դարձյա՜լ այս հիմարացնող մտքերը: Վեր կաց, գեղեցիկ հղացում, ուտելիք գտիր, թեկուզ մի կաշու կտոր: Վճռում եմ վեր կենալ,

բայց շոգն ու հոգնածությունը մեխել են տեղումս: Լավ, դե՛ նստիր և երկինք նայիր, որ նրա մանանան թափվի գլխիդ*): Նստիր ու սատկիր սովից, հոգնածությունից, չարությունից: Իսկ քավթառը հիմի տուն է հասել, սեղան նստել լամլամորում է հորթի տապակը կարտոֆիլի սալաթով, և մոռացել է քեզ էլ ու քո հիմար հանաքն էլ: Մի կտոր սուր ոսկոր էլ չկա, որ կուլ գնա խեղդի այդ քյոփակին: Տրաքվի՛ր: Նա հանգիստ ուտում է իր ճաշը: Կարող եմ ձեզ ավետել, արժանապատիվ քննադատ, որ պատառը անփույթ և անփորձ ժամանեց ստամոքս: Օ՜ֆ, աստված իմ, մինչև ե՞րբ պիտի քաշե իմ տառապանքը: Ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ: Թեկուզ ամբողջ տիեզերքը ճամփորդեմ՝ երևի մի պատառ հաց չպիտի գտնեմ տրաքվելու:

Մի ծանոթ սիլուետ է օրորվում աչքիս առջև: Զգում եմ, որ քայլվածքը տեղացու չէ. այլ մեր ցեղի: Մոտենում է: Ճզմաճյանն է. պոլսեցի ուսանող, իրավաբան: Մտազբաղ է երևում. մաքուր ածիլված է, թեև այսօր տոն չէ: Այդ ավելի թավ տեսք է տալիս նրա լայն ու սև ընչացքին, նա բարձրահասակ է, ոսկրոտ ու ջղուտ, ճերմակ շալվարի մեջ ոտների տեղ կարծես փայտե ցցեր լինեն: Ածուխե աչքերը մի վայրկյան իմ կողմն են ընկնում և խուսափում: Ահա մոտովս է անցնում: Զգալով որ ես տեսա, անհարմար է սեպում խուսափել. բարևում է: Արհամարհում եմ նրան. այդ պճնամոլ, կնամոլ, եսամոլ ու փողամոլ մարդուն, որ շտապում է պանսիոն ճաշելու: Սա էլ տեղի, հագուստի, ճաշի և ուսման իրավունք ունի: Հարուստ է. միշտ հանգիստ, կուշտ, եսական հանգստություն, որին մի վայրկյան իսկ չի խռովում իմ տառապանքը: Նա արդեն հեռու է ինձանից: Ես միայն հավատում եմ. այդ է իմ մխիթարանքը:

Հանկարծ հիշում եմ, որ Ճզմաճյանը կիմանա իմ նախկին ընկերներից մեկի հասցեն: Անշուշտ կիմանա, և եթե հասցե գտնեմ փրկված եմ. գոնե մի երկու օր: Բայց քաշվում եմ գնալ հարցնելու: Ինձանից եմ քաշվում. չէ՞ որ արհամարհեցի նրան: Հապա՞, պարոն, երբ արհամարհում են մեկին՝ էլ նրան չեն դիմում, թեկուզ մի հասարակ բան իմանալու: Այդ էլ օգնություն է. իսկական օգնություն: Հը՞, գնա՞մ, ի՜նչ կա որ, մի հասցե: Կժպտամ և տպավորությունը այլ կլինի, հը՞…

— Ո՛չ, սատկիր և մի գնա։— Լավ, ասում ես չգնամ։— Ո՛չ, մի գնա։— Դե կաց ու սատկիր։

Բայց նոր ծրագիրը կրկնում է թմրած քաղցս. այն միտքը, որ հնար կունենամ ճաշելու՝ թուլացնում է համառությունս: Վճռում եմ գնալ, հարցնել:

Այո՛, գնա՛, հարցրու. թե չէ՝ նա քեզ չի սպասում: Վեր եմ թռչում տեղից և հետապնդում Ճզմաճյանին: Նա բավական հեռու է. վազում եմ. քրտինքը տալիս է ճակատիս. վախենում եմ հուզված երևամ և այդ վախը ավելի է հուզում ինձ: Քայլերս քաշ եմ գցում: Ո՛չ, հարկավոր չէ գնալ: Բայց փորձությունը գրգռում է, ջղայնացնում: Ուզում եմ վերջ տալ այս դրության և վազում եմ Ճզմաճյանի հետևից: Հասնում եմ նրան և կանչում. «Պարո՛ն Ճզմաճյան»: Բայց բերանս այնպես ցամաքել է, այնպես հոգնած եմ և տրորված, որ ձայնս փորս է ընկել: Ա՜խ, ինչու է ձայնս փորս ընկել, ինչո՞ւ եմ այսպես խղճալի դառել: Պարոն Ճզմաճյան, կրկնում եմ ես և աշխատում թքով բերանս թրջել, որ ձայնս դուրս գա: Բայց հուզմունքը օղակի պես սեղմում է կոկորդս և ձայնս դուրս չի գալիս: «Պարոն Ճզմաճյան», նվում եմ ես խղճալի ձայնով: Փողոցային մի լակոտ ինձ է նայում, հետո Ճզմաճյանին, հասկանում է, որ չեմ կարողանում խոսել՝ ժպտում է, կարծեմ լրբաբար, թվում է թե գիտե թե՛ սովածությունս, թե՛ հետապնդելուս նպատակը, և թե՛ հուզմունքիս պատճառը:

— Լսեցե՛ք, պարոն, պարոնը ձեզ է կանչում,— ձայն է տալիս Ճզմաճյանին փողոցային տղի ուժեղ, կրծքի ձայնով:

Ճզմաճյանը շուռ է գալիս և զարմանքով ինձ նայում. բայց չի հասկանում, այլ քայլերը քաշ գցելով՝ գնում է. ուզում է, որ ես հասնեմ:— Պարոն Ճզմաճյան,— դիմում եմ նրան, բայց կարծես խոսողը ես չեմ, այլ մի

երրորդ մարդ, այնքան է ձայնս խորթ հնչում ականջիս, կարծես իմս չլինի. ես ուզում էի ձեզանից Սերոբյանի հասցեն։

— Ի՞նչ,— հարցնում է Ճզմաճյանը ունքերը վրա տալով։ Երևի ասածս չի հասկանում։ Այդ վիրավորում է ինձ, բայց թուքս կուլ տալով ջանք եմ գործ դնում որոշ ու հաստատ ձայնով կրկնել ասելիքս։— Սերոբյանի հասցե՞ն… Բյունիոն, 25,— պատասխանում է Ճզմաճյանն ու լռում։ Հը՞մ, չի ուզում շարունակել. խուսափում է, պարզ է, որ խուսափում է։ Է՛հ, իհարկե պիտի խուսափի. ես ո՞վ, նա ով։ Ահա շուտով ես ուշաթափ կընկնեմ հենց այս փողոցում, և կարող է պատահել, որ նա տեսնի… գուցե և արհամարհանքի ու խղճահարության նման մի բան շպրտի իմ կողմս, հա՛, հա՛, հա՛։ Իհարկե, ես ո՛վ, նա ով։ Բյունիոն, 25։— Բյունիոն վեն սիզ,— արտասանում է սառը ֆրանսերենով Ճզմաճյանը։

— Շնորհակալություն։— Ցտեսություն,— ասում է չոր շեշտով Ճզմաճյանը և քայլերը արագացնում դեպի պանսիոն։ Հետ եմ դառնում, գլուխս ջարդվածի նման, արհամարհված, լքված։ Բայց չեմ մոռանում մի անգամ էլ հետ նայող ինձ վիրավորողին։ Նա գնում է արագ և հավասար քայլերով։ Ահա հասավ պանսիոնին։ Հենց այն է ուզում էր մտնել՝ մի սպիտակազգեստ օրիորդեկավ դեմից։ Նրանք կանգ առան։ Ճզմաճյանը ուրախ բարևեց նրան։ Ես հեռանում եմ և ետ նայում։ Նրանք կանգնել խոսում են։ Ճզմաճյանը նայեց իմ կողմը և տեսավ, որ ես ետ եմ նայում։ Այո, տեսավ։ Դա էլ ինձ վիրավորեց։ Ուրեմն նա կարծում է ես իրանով շատ եմ զբաղված։ Գիտեմ, հիմի զայրանում է։ Բայց, տեր աստված, ես նրան արհամարհում եմ. ինչո՞ւ եմ նայում նրան. ո՞ր սատանան է ինձ բզում, թե նայիր։ Ահա՛, էլի նայեցի։ Թյո՛ւ։ Դարձյալ Սեն-Ֆրանսում հրապարակն եմ. նույն տեղը. նստում եմ հոգնած ու վիրավոր։ Վճռում եմ քիչ հանգստանամ ու գնամ Սերոբյանին գտնելու։ Հանկարծ միտս է ընկնում իմ շփոթությունն ու անզորությունը Ճզմաճյանից տեղեկություն հարցնելիս… Արյունը գլուխս է խփում։ Ի՞նչ, ուրեմն նա կարծում է, թե ինձնից մե՞ծ արարած է։ Աշխարհքի քոռության նայիր. հարուստ է, մեծ մարդ է, իրավաբանություն է սովորում՝ մեծ մարդ է, գնում է ճաշելու՝ մեծ մարդ է։ Իսկ ես, որ միջոց չունեմ այդ ամենը անելու՝ այնքան փոքր եմ, որ հետս կարելի է այն ձայնով խոսել, ինչպես մի լաքեի հետ չես համարձակվի։

— Սպասի՛ր, հոսհոս։ Մաղձս, որ այս վերջին երկու տարին թանձրացել է, ավելի է հավաքվում. այս վիրավորանքն էլ գանձում եմ մեջս և խնամքով պահում։ «Վեն սի՛զ»… Մյուս անգամ կհանդիպի չէ՞ այդ հոսհոսը. ցույց կտամ նրան «վեն սիզ»։

Ինձ թվում է թե Ճզմաճյանի վերաբերումը դեպի ինձ՝ միայն նրանը չէ, այլ ընդհանուրինը, որ Սերոբյանն ու բոլոր հայ ուսանողներն էլ այդպես են վերաբերվելու։ Ինձ թվում է, թե բոլոր ուսանողները գիտեն դրությունս, իրենց մեջ խոսել են իմ մասին, վատաբանել, դատապարտել թե ես արդեն ուսանողության մեջ արհամարհված անդամ եմ… և այնպես ճնշվում ու դառնանում եմ, որ չեմ ուզում գնալ Սերոբյանի մոտ։ Հոգիս այնպես է ճնշվում այդ մտածումից, որ կորցնում եմ այն հենարանը, որի վրա կռթնած է ինքնասիրությունս։ Միայն մարմինս եմ զգում և մի տեսակ ամոթ եմ զգում, որ իմ մսի ու ոսկորների կտորտանքը անարժանորեն ման եմ ածում Եվրոպայում և նրանով զբաղեցնում ամենքին։ Եվ այդ ամոթը գերում է մարմինս։ Հանկարծ հացի հոտը մտնում է քիթս, և ինչ-որ բան միտքս է ընկնում։ Եվ սկսում եմ որոնել թեինչ-որ մի բան որ հարազատ է և խաղաղ. գուցե հենց հացն է դա, որ ամեն տեղ խաղաղում է մեր հոգում իր հոտով։ Ոչ, դա խաղաղ մանկություն է…

Հիշում եմ այն խաղաղ երեկոները, երբ մենք եղբայրներով ու քույրերով, դեռ մանուկներ, բոլորվում էինք սուփրի շուրջը և մեր բարի մայրը մեզ հաց ու պանիր բաժանելով պատվիրում էր հանգիստ խաղալ։ Եվ մենք «բրդուճներ» շինելով պանրի կտորները վրան էինք դնում ու խաղում. ամբողջ սենյակը լցվում էր մի հարազատ հոտով, որ ահա առնում եմ — որտեղի՛ց որտե՛ղ — հեռու Շվեյցարիայում։ Է՛, էլ չկա այն հոգատար ձեռը, որ ինձ հաց էր տալիս և ոչ ոք չի հոգում իմ մասին։ Բայց

խաղաղ և երջանիկ օրերի հուշերս մեղմում են զայրույթս և մեջս լցնում մի գորովանքով դեպի ինձ: Եվ սկսում եմ կարեկցել ինքս ինձ. և որովհետև քաղցից և հոգնածությունից ներվերս բացվել են՝ մի բան սեղմում է կոկորդս: Եվ ընկնում եմ մի նստարանի վրա:

Հանկարծ սիրտս տրորում է, խառնում: Ինձանից մի քանի քայլ հեռու միալար քչքչում է արհեստական աղբյուրի ջուրը: Եվ այս լքյալ ու հուսահատ բոպեին այդ մոտիկությունը ինձ մխիթարում է. անլեզու աղբյուրը կանչում է ինձ և ձրի առաջարկում իր սառնորակ ջուրը: Ա՜խ, եթե հացի խնդիրը ջրի խնդիր լիներ — մարդկությունը հիսուն դար առաջ կերթար: Խմում եմ ջուրը և սիրտս մի բոպե կանգնացնում է:

Նստարանի վրա մնալ անկարելի է. քաղցը ստիպում է վեր կենալ, գնալ որոնելու, նա ինձ պար է ածում, և ինչ ուզում է մտածեմ, ինչ լավատես ու վատատես մտքեր գլխովս ուզում է անցնեն՝ նա պահանջում է իրը. և ես շտապում եմ չգիտեմ ուր: Մեքենաբար հեռանում եմ Բյունիոն…

Հը՞, ի՞նչ կլինի, եթե փորձեմ բախտս. միթե՞ Սերոբյանը այնքան տմարդի կլինի, որ մի ֆրանկ պարտք չի տա… Գնամ, իսկույն խնդրեմ այդ մի ֆրանկը, ի՞նչ կլինի… Եվ հանկարծ վճռում եմ ու արագ քայլերով հեռանում:

Եվ քանի մոտենում եմ նրա տանը, այնքան հույսս աճում է և ձեռնարկս իրական է թվում: Աստված իմ, մի քանի բոպե ևս, երևակայությունս վառվում է և գործը հեշտ է թվում: Եվ վերջապեսինչ մեծ բան է մի ֆրանկը: Տե՜ր աստված, հիմի էլ այնպես դասավորիր մոլորակների ընթացքը, այնպես փոխիր Լուսնի դիրքը, այնպես տեղափոխիր Մեծ Արջային համաստեղությունը, որ այդ ֆրանկը ստանամ: Թող այս անգամ էլ քո կամքը չլինի, իմը լինի: Թեև, չնեղանաս, իմ կամքն էլ քոնն է: Վերջապես մի բան գիտեմ ասում եմ՝ իմ խոսքը լինի: Ով Բյունիոն քսանհինգ, տեղից չփախչես, այս անգամ գոնե տեղդ կաց: Տունը գտել եմ, միջանցքում եմ, մութն է, բայց սանդուղքներից բարձրանալով կանգնում եմ դռների առաջ և կարդում ազգանունները: Վեյնբերգ, Կուկուլկին, Սիլիո: Ոչ, սա չէ. և իմ քոռ բախտը այնպես է, որ Սերոբյան ազգանունը չպիտի լինի: Եվ ինչո՞ւ լինի, ե՞րբ էր եղել, որ հիմի լինի: Երկրորդ հարկ չկա… Երրորդ չկա… Սյուլլեր, Բարթոլոմե…Չկա… Իսկ այն երրորդը, կարծես նա չէ՜… Ոչ, ոչ Էվրիկա Սերոբ — մնացածն էլ բյան է. ով սուրբ բյա՜ն. զանգը տո՜ւր: Սիրտս կարծես մուրճի պես խփում է սալին: Հուզված եմ և դարձյալ վախենում եմ, որ նկատվի, որ եթե նկատվի, էլի պիտի արհամարհվեմ: Որովհետև ինչքան մարդիկ խեղճանում են, այնքան արհամարհվում են: Զանգը տալիս եմ: Դուրս է գալիս մի պառավ կին: Պարոն Սերոբյանը տա՞նն է: Տանն է, խնդրեմ համեցեք, բարիների քաղաքավարությամբ հրավիրում է ներս և ես սրտապնդվում եմ: Պառավը ինձանից առաջ է ընկնում, մոտենում Սերոբյանի դռանը և չոր մատներով ծեծում:

— Ո՞վ է, մտեք:

— Մի պարոն ձեզ ուզում է:

Դուրս է գալիս Սերոբյանը զզզզված մազերով, աչքերը ուռած: Օհո՜, լավ նշան չէ, քնած էր:

— Հո քնած չէիք, խանգարեցի:

— Ո՛չ, ո՛չ, խնդրեմ,— ասում է ուժեղ տենորով Սերոբյանը:

Ներս մտնելուս պես աչքս շոյում է կոկիկ, հարուստ ուսանողի սենյակը: Բազմոցը թավիշ, սեղանի տակին գորգ, անկողինը շիրմայով պատած, մեծ ընկույզի պահարան, հսկա գրադարակ՝ լի մասնագիտական գրքերով: Նայելով այդ միջավայրին, սիրտս խաղաղվում է: Եվ զգում եմ, որ ինքս ինձ համար այնքան դաժան մտքերի միջավայր եմ ստեղծել, որ աշխարհը դարձրել եմ դժոխք,մինչդեռ նա

այդպես չէ. նա խաղաղ է և անգիտակ իմ վիճակին: Բավական է խոսեմ, հայտնեմ և նա ինձ օգնության կգա, կհարգի. կհասկանա:

Իհարկե, ինչ մեծ բան է մի ֆրանկը, ամոթ չէ՞ հուսահատվելը:

— Նստեցեք, խնդրեմ,— ասաց Սերոբյանը հանդիսավոր և բարձր ձայնով (նա միշտ այդպես է խոսում): Նայում եմ նրա չեչոտ երեսին. գիրացել է և լցվել. նրա արնաշատ և կուշտ դեմքի վրա կամք և ուժ կա, տաք, կարմիր ուժ: Առողջ, հարուստ ծնողների առողջ զավակ, միշտ կուշտ, միշտ հաջողակ, միշտ անզուրկ: Սիրտս հանգստանում է նրան նայելով. ուժս տեղն է գալիս: Նայում եմ նրա սեղանին: Աստված իմ, բայց դրանք փոքրիկ հացիկնե՛ր են, կարմիր երկճղանի լավ թխած. բարակ թղթե փաթեթը քիչ բացվել է և նրանցից մեկը դուրս է ընկել և ինձ է նայում:

— Ամառը տեղ չե՞ք գնում, հարցնում է ինձ Սերոբյանը:

— Ո՛չ,— և աշխատում եմ մի խոսք գտնել բացատրելու թե ինչու: Բայց ուշացնում եմ բացատրությունը և ինքս եմ հարցնում: Իսկ դուք, ինչպես, մնո՞ւմ եք:

— Ոչ, ես վաղը մեկնում եմ Ինտերլակեն:

Նրա պատասխանը հանգիստ է, ուժեղ և բնական:

Մենք լռում ենք: Եվ ի՞նչ խոսենք: Մոտիկ ծանոթներ չենք. մի երկու անգամ համալսարանում պատահել և մի երկու խոսք փոխանակել ենք — այդ է մեր ծանոթության պատմությունը: Այո, կարելի է խոսել բնական գիտություններից. ես այդ ճյուղից տեղեկություն ունեմ, բայց սիրտ չունեմ, սոված եմ: Մի բառ կա, որ հնչյունով դուրս կգար բերանիցս, բայց դա հետաքրքիր չէ Սերոբյանի համար. մինչև իսկ արհամարհելի է, և ես լռում եմ: Հացն է այդ բառը: Օֆ, ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ: Ես էլ գիտեմ, պարոն Սերոբյան, որ ձեզ համար հետաքրքիր չէ այդ հաց բառը, բայց դա ինձ ահա քանի ամիս է զբաղեցնում է: Միշտ կիսաքաղցած եմ եղել. և դա ինձ խանգարել է պարապելու. իսկ հիմի մի երկու խոսք անգամ չեմ կարող փոխանակել, քանի որ սուր քաղցը կտրատում է ստամոքսս, հասկանո՞ւմ ես, պարոն բժիշկ Սերոբյան: Եթե հոգեբան չես, գոնե բժիշկ եղիր, և ինձ հասկացի՛ր — Սերոբյանը ինձ է նայում և կարծես սպասում, որ մի բանասեմ այցիս առիթով: Հնար չկա, պետք է իսկույն սկսեմ: Բառն եմ փնտրում, որով սկսեմ, չկա: Ինչ կերպ դարձնում եմ՝ չոր է դուրս գալիս և անհարմար:

— Պարոն Սերոբյան, ես եկել եմ ձեզանից խնդրելու… Հեքլի «Մոնիզմ»-ը[2], եթե ունեք:

— Հեքլի «Մոնի՞զմ»-ը ունեմ: Մի օրիորդ խնդրել էր, պետք է գար տանելու. կարծեմ չի գալ, ուրեմն ձեզ կտամ.— Կարծես մենախոսելով վեր է կենում Սերոբյանը և մոտենում գրադարանին: Նա որոնում է, իսկ ես դառնում եմ իմ սովորական մտածումիս, որ մեկ է, անփոփոխ, համառ և աղիքներս կտրատող: Մտովի բերանս եմ դնում սեղանի վրա ընկած կարմիր հացիկը և կատաղի ծամում: Դեմքս ծամածռում եմ, որ դիմանամ այդ տանջող գայթակղությանը: Նայում եմ Սերոբյանին. նա որոնում է և մտազբաղ կարդում գրքերի անունները: Զգում եմ որ մենք տարբեր էակներ ենք այս րոպեիս: Նա ինձ համար գիրք է որոնում, որի կարիքը չունեմ: Իսկ ես ի՛նչ եմ տենչում: Ի՛նչ մեծ տարբերություն երկուսիս մեջ: Տեսնես, եթե հացը ուտեմ ես էլ կդառնամ նրա պես. այդ կուշտ, հանգիստ մարդու պես, որ այս րոպեիս ամեն ինչ մոռացած գրքերի վերնագիրն է կարդում, կարծես մի շատ կարևոր գործ լինի դա: Եվ ինչիս էլ էր պետք գիրքը այս րոպեիս, ո՞ր սատանան դուրս թռցրեց բերանիցս:

Հառաչում եմ և նայում փողոց: Եվ ինչի՞ս է պետք այս ամոթխածությունը: Ուզում ես մի ֆրանկ, ասա՝ «Պարոն Սերոբյան, մի ֆրանկ տուր». թե չէ ինչ քար ու քացախ էր այդ Հեքը: Օ՜, որքան երեխայամիտ եմ ես.

— Ահա,— և Սերոբյանը մի դեղնաշապիկ գիրք է մեկնում ինձ։— Շնորհակալություն,— ասում եմ և վերցնում գիրքը և սարսափում, որ խոսակցության նյութս սպառվեց դրանով։ Հիմի ի՞նչ ասեմ, ի՞նչ խոսեմ։ Վեր կենամ, գնամ էլի։ Բայց դեռ նստած եմ։

— Տվի՞ք Ձեր քննությունը,— հարցնում եմ մեքենաբար Սերոբյանին, որ փռվել է այդ բոպեին բազմոցի մեջ։ Հարցս ինձ չի զբաղեցնում, ուստի և պատասխանն էլ մեքենաբար եմ լսում։ Չգիտեմ ի՛նչ է ասում. միայն նրա չեչոտ, կոշտ դեմքը, փայլուն, սև աչքերը, թավ ածուխե ունքերը, խրոխտ հայացքը վախեցնում ենինձ։ Այդ կուշտ և առողջ մարդը ինձ չի հասկանում։ Ինչպես նրանից մի ֆրանկ ուզեմ. նա կհայհոյի ինձ։ Մի ֆրանկ որ չունես, ի՞նչ մարդ ես, պիտի մտածի։ Նրա խելքից մտքից դուրս է իմ դրությունը, գուցե մի հեռավոր տեսություն, որի գործնականը նա չի ճաշակել երբեք։ Քա՜ղց, ի՞նչ բան է որ… հա՛, հա՛, հա՛։ Ո՛չ, մի սով անգամ չեմ խնդրի սրանից, վճռած եմ։ Սրա պառավ տանտիկինը որ ասաց՝ «Ներս համեցեք», սա, որ ասաց «Ոչինչ, խնդրեմ, համեցեք»՝ ինչի՞ արդյունք էր այդ սիրալիրությունը. անշուշտ այն բանի, որ չգիտեն դրությունս։ Որ իմանա՛ն… Հը՛։ Ո՛չ-ոչ, սատկիր և ոչ մի սու մի խնդրիր, ասում եմ ինքս ինձ և վեր կենում։ Վայրկենաբար զղջում եմ արած շարժումիս և իբրև թե ուզում էի պատին կպցրած մի նետ մոտիկից տեսնել՝ մոտենում եմ և նայում, ոչինչ չեմ տեսնում։ Ինձ ճնշում է Սերոբյանի լուրջ լռությունը. ո՛չ սրտնեղ, այլ անկարեկից լռություն։ Հանկարծ նա մի շարժում է անում, և մոտենալով դռան բաց է անում և գլուխը հանելով արանքից՝ կանչում է տանտիկնոջը. «Տիկի՛ն, խնդրեմ թե՛յ տվեք»։ Եվ իսկույն ինձ դառնալով. «Դուք կարծեմ արդեն ճաշել եք»։— Ասում և լուռ նայում է աչքերիս, որ և ճնշում է ինձ։ Բայց արդեն թուլացած եմ։ Լավ, հետո կաշխատեմ դատելու լավն ու վատը. պետք է մնաս և խմես ասում եմ ինքս ինձ և նստում։ Նայում եմ Սերոբյանի լուրջ դեմքին. որքան թարմ է այդ 25-26 տարեկան դեմքը. ինչ ասել է առողջ ժառանգավորություն և անկարոտ կյանք։ Երկրորդ ֆակուլտետն է անցնում և սովորում է գիտության համար. փողի կարիք չունի։ Ա՛յ անհոգ թռչունի և գիտակից ուսումնասերի կյանք։

Խոսում ենք. բայց անկապ և ըստ երևույթին լուռ չմնալու համար։ Եվ ո՛չ մի անգամ Սերոբյանը չի հարցնում իմ ուսանողական զբաղմունքներիս մասին։ Երևի այդ հարցումն անօգուտ է։ Ես որպես ուսանող վաղուց արդեն մեռած եմ այսպիսի ուսանողության համար. ե՛ս որ այնքան սեր ունեի դեպի ուսումը և այնքան գեղեցիկ հղացումնե՛ր, հա՛ , հա՛, հա՛… Բայց այդ միջոցին դուռը ծեծում են։ Մտնում է մոմեղեն պառավը. տոհմիկ ժպիտը թառամած է բարի դեմքին, թեյի մատուցարանը մարմարե ձեռքերին։ Ժպիտը կարծես ասում է. «Լավ արիք, պարոն Սերոբյան, որ ձերհայրենակից պարոնին պահեցիք թեյի. ժամանակը զվարճալի կանցնի»։ Այդ ժպիտը քաջալերում է ինձ և ես պատրաստվում եմ վերածնվել թեյով։ Տրամադրությունս հրաշալի է. միայն Սերոբյանի լրջությունը սպանում է ինձ։ Օհո՜, պառավը դեռ ավելի սիրալիր է. ահա լցնում է թեյը։ Բայց դրանք գավաթ չեն, այլ մատնոց։ Իսկ ինձ մի օվկիանոս հերիք չի անի։ Աստված ջան, ի՜նչ տանջանք է. սա ինձ հերիք չի անի։ Ահա և հացիկները։ Սերոբյանը ինձ սառնորեն համեցեք է անում և վերցնում իր գավաթը։ Ես հարձակվում եմ հացիկներից մեկի վրա…*) Տրամադրությունս գերազանց է. պատրաստ եմ հանաքներ անելու։ Բայց նախ Սերոբյանի լրջությունը պետք է հալել։— Պարոն Սերոբյան, դուք արդեն ընտրե՞լ եք ձեր մասնագիտությունը*։— Դեռ ոչ. բայց, իհարկե, կընտրեմ։— Այո՛, իսկ ես կարծում էի… բայց գիտեք, իմ կարծիքով հետաքրքիր կլինեին ներքին հիվանդությունները։ Հը՞…

— Գուցե վերցնեմ, տեսնենք։ Սերոբյանի խոսածից երևում է, որ ինձ նման ոչ մասնագետի խոսակցությունը նրա համար հետաքրքիր չէ։ Բայց ես, չգիտեմ ինչու, շարունակում եմ հիմարությունս,— Ներքին հիվանդությունները… ստամոքսը ամբողջ օրգանիզմի հիմքն է… Օ, դա շատ հետաքրքիր մասնագիտություն կլիներ։— Սերոբյանը լուրջ նայում է դեմքիս, բայց կարծես ուրիշ բան է մտածում և աշխատում է մի բան միտը բերել և չի կարողանում, գլխով մեքենաբար հավանության նշան է անում և լսում։ Ես երրորդ հացիկի վրա եմ. մտածում եմ՝ վերցնե՞մ, թե սպասեմ։ Բայց ախորժակս

սոված գայլի պես ստամոքսս ընկել՝ լափել է ուզում ամեն ինչ, ինձ էլ հետը: Սպասիր, գազան, մի քիչ շնորհքով. կե՛ր, բայց քաղաքավարի: Է՛հ, չեղավ, դու արդեն երրորդ հացիկը ոչնչացրիր:— Ի՞նչ եք կարծում պարոն Սերոբյան, լավ չի՞ լինի, եթե այս Հեքլի «Մոնիզմ»-ը թարգմանեմ… Զգույշ, գազան, չորրորդ հացիկին չմոտենաս, բավական է… Աստված իմ, թափիր գլխիս հացիկների կարկուտ, խցիր այս գազանի բերանը միլիոն հացիկով, ազատիր հոգիս սրա ճանկից: Այո՛, մտադիր եմ թարգմանել Հեքլի բոլոր գրքերը: Եվ գիտե՞ք, այդ մտքով էլ ընտրեցի բնագիտական բաժինը… Օ, Հեքլը իմ աստվածն է… Զգույշ, գազան… Շնորհակալ եմ, պարոն Սերոբյան, ես արդեն երրորդգավաթը խմեցի… Է՛հ, դե որ լցրիք… Բայց դուք բան չկերաք, բոլորը ես… խոսքի բռնվեցինք… սպառեցի:

Գազանը կատաղել է, լափում է: Զարմանալի բան, եթե մի կես ժամ առաջ այս հացերը չլինեին՝ ես կարող էի ինձ կարգին պահել, հիմի անկարող եմ զսպել այնքան ախորժակս կատաղել է: Կուլ եմ տալիս հացերը և գաղտագողի դիտում Սերոբյանին, թե արդյոք չի՞ տեսնում իմ արարքը: Հը՛, ոնց չի տեսնում, պարոն Քաղցածյան, դու խժռի՛ր. իսկ հաշիվը տանը կմաքրենք: Ո՛ւֆ, երբ պիտի սատկես՝ ազատվեմ: Ճնշվում, գետինն եմ մտնում Սերոբյանի լուրջ ու լուռ վերաբերումից: Այն էլ ի՛նչ լռություն, դրանից հետո հերոսություն է պետք՝ մի ֆրանկ էլ ուզելու: Բայց պետք է այդ հարկը պահանջել: Այո՛, այդ պետք է. թե չէ՝ խայտառակ սովը սպասում է ինձ: Թուքս կուլ եմ տալիս և խնդիրքս լեզվիս ծայրը դնում: Հենց այն է ուզում եմ ասել՝ ներսիցս մեկը բռնում է. ո՛չ, և խնդրում է չասել. զիջում եմ և սպասում հարմար առիթի:

Էհե՛, է՛. ի՛նչ աստիճանի վստահությունս կորցրել եմ: Ի՞նչ եմ դառել, տեր աստված, ինչո՞վ եմ զբաղված: Ներսիցս մեկը բողոքում է. լսում եմ, հասկանում նրա ձայնը, բայց լսելու ժամանակ չունեմ: Խնդիրս լուրջ է. գիտե՛մ ինչ արժե այն հանգամանքը, եթե այսօր և վաղն էլ դրամ չունենամ: Ուստի և լսում եմ ներքին ձայնիս և ասում. «Սպասի՛ր, դրա մասին հետո»:

Երկնային նորություններ: Զանգահարում են: Մի բոպե ևս, և սենյակի դուռը ծեծում են: Բայց դա զարհուրելի բան է… Սերոբյանի մոտ հյուր է գալիս:— Մտեք. հնչում է Սերոբյանի հնչեղ ձայնը: Ներս է մտնում Բեկտաբեկովը. հայ ուսանող, հարուստ. վերջին մոդայով ընտիր սև երկարափեշ պիջակ, լայնատոտ շալվար, լաքե կոշիկներ և լայն ժապավենով: Նա ագռավի մազեր ունի, վրձինի պես խուզած, մաքուր ածիլված է և բեղերը կարճ կտրած: Նրա ինքնավստահ շարժուձևն ու սև սաթի խորամանկ ընկույզի աչքերը գրգռում են բարկությունս: Վեր եմ կենում տեղից:

— Դուք գնո՞ւմ եք:

— Այո, ժամանակ է, ներեցեք: Ցտեսություն:

— Ցտեսություն:

Փողոցումն եմ: Անփող, անօգ, զայրացած, նվաստացած: Նորից դուրս եկա բաց ծովը՝ նավաբեկ, հուսահատ: Ո՞ւր գնամ, այս անվերջ անկարեկից, խիստ և անտարբեր աշխարհում: Սովս քիչ մեղմացել է. կարող եմ գոնե շարժվել և մի քիչ էլ մտածել, հոգեկանով ապրել: Եվ ահա տխուր դրությունս աշնան ամպամած օրի պես պաշարում է շուրջս: Բարձրանում եմ դեպի Սենիալ: Անժպիտ, նեղ վիճակս տխրեցնում է ինձ. և քանի որ քաղցից քիչ աչքս բաց եմ արել՝ հետ եմ նայում, դեպի անցյալս և նայում: Սառը, կապարե մշուշ է եկել փաթթել անցյալիս վրա: Դա մի գերեզմանոց է, ուր թաղել եմ ամենաջերմ իղձերս: Առարկաներ չեն երևում, այլ տձև, մշուշի հետ ձուլված տարտամ սիլուետներ: Վերջին երեք տարիս, չարքաշ երեք տարիս, որ միայն մաքառում է եղել սովի և այլ զրկանքների դեմ — ասես մի օր լինի, մղձավանջի ծանր, դաժան օր: Մի կտոր հացի և մի սառ անկյունի խնդիր է եղել այդ բոլորը. առաջ տանում էի մի կերպ և ձեռս այդ երկու բանը ընկնելիս վերցրել եմ սիրած գրքերիս մեկն ու ընկղմել գիտության և փիլիսոփայության անհուն ոլորտները, թափառել, հիացել, ապրել, մինչև որ դաժան

իրականությունը իր սառցե մատներով զարթեցրել է ինձ և ուղարկել փողոց երազելու իրավունք — մի կտոր հաց գտնելու: Վերջին տարիս էլ չեմ երազում: Ոչ մի օր իրավունք չեմ ունեցել թռչելու այդ ազնիվ արծվիս հետ: Ոչ, պետք է եղել ճիճվի պես սողալ ծաղրող իրականության փողոցներում: Թյո՛ւ, շան կյանք, տխուր կյանք, հիմար կյանք: Եվ ո՞ր տխմար բախտը ինձ բոթեց զցեց գիտության ու երազների աշխարհը, ինձ, Ծուկուռի ներքնատան աշխարհի զավակիս: Ես ո՛վ, գիտությունն ո՛վ: Իմ տեղը ա՛յ այն դարբնոցն է, ուր ահա ձի են պայտում, առանց հարցնելու, թե ինչ բան է այդ ձին ու պայտը այդ Jing an sioh-երը: Ահա այն երեսը մրոտ երիտասարդը, որ մեխեր է ջոկում վարպետին տալու, ինձանից կուշտ և երջանիկ է և չգիտե, թե աշխարհում Jing an sich ասած զահրուզխկում կա, որ պետք է անպատճառ իմանա և իմանալու համար շլինքդ կոտրես: Գնա՛, գնա՛, գնա գտիր Jing an զահրումարը և ապրիր:

Սենիալի անտառն եմ: Նեղ, մշակված արահետը դառնում է դեպի դիտատեղը: Ինձ հետ բարձրանում են և ուրիշները. բայց ես ուշ չեմ դարձնում ոչ ոքի: Վիճակիս դառնությունը կլանել, ծծել է մտքերս, ընկել եմ հոգուս ներքին մռայլ աշխարհները և թափառում: Ի՞նչ եմ ես, ինչացո՞ւ… Եթե պետք եմ կյանքի համար՝ դե թող պետք ածեն ինձ. ես ջահել եմ, ձգտումների տեր, ոգևորվող. իսկ եթե մահի համար եմ, էլ ո՞ր օրին է սպասում մահը, թող գա: Է՛հ, երևի տիեզերքի մեջ կան և միջին արարածներ, որոնց դերը անորոշությունն է: Ապա ինչու համար եմ այսպես սոված քաշ գալիս և արհամարհանքով սնվում: Ո՞ւմ և ո՞ր տիեզերական անխախտ և խորախորհուրդ նպատակի համար է իմ այս ողորմելի գոյությունս: Հառաչում եմ և ընկնում հերվան չորացած տերևների վրա, որ արդեն վաղուց սկսել էին խշխշալ ոտներիս տակ: Նայում եմ չոր տերևներին, որ փռված են շուրջս, և տխրում. ես էլ նրանց պես մի բան եմ կյանքի մեջ: Նրանք, իմ ընկեր մարդիկ, այն բոլոր տերևներն են, որ ահա վերևը ցցվում են ճյուղերի մեջ իրենց թեթև օրորոցներով, իրիկնահովի փափուկ ձեռքերով: Իսկ ես, թափված տերևս, ընկել եմ նույն հովի տակ, որ իր պաղ ոտներով քշում է ինձ և ածում փոսերը: Ի՜նչ սարսափելի է սեփական մահը տեսնել ու դանդաղ մեռնելը: Նայում եմ ձեռներիս. ի՜նչ ճերմակ են նրանք և ոսկրոտ. շան պես տանջված ու լղար եմ: Ախորժակս փակ է, բայց սոված եմ. ներսս սառչում է, տրորվում է: Ճրագի պես հալչում եմ, հատնում: Ի՜նչ պատանի էի ես մի ժամանակ: Ուր է այն կարմրաթուշ, լիքը, կենսուրախ, տաք պատանին: Այն ժամանակ ուժեղ էի և պաշտպանված: Կարիք չունեի, բայց և այնպես՝ հոգացողներս շատ էին: Հոգացո՜ղ: Հիմի դանակով, ճանկերով պիտի դուրս քաշես մեկից մի կտոր հաց: Ամենքը ոտներով տալիս, զցում են փոսերը, փոշիների մեջ: Ճզմաճյա՜նը… Բայց ինչո՛վ էր նրանից պակաս Սերոբյանը, այդ կուշտ, առողջ, անկարեկից, անտեղյակ մարդը: Բժիշկ է… հա՜, հա՜, հա՜. դեմքիս նայելով կիմանա՜ր վիճակս: Ինչո՞ւ հարց ու փորձ չարավ, չիմացավ դրությունս: Այո, մինչև վերջին շունչս էլ որ չարչարվեմ, տապկվեմ՝ մի անգամ չի հարցնի, չի իմանա դրությունս: Եվ ո՛չ ոք չի հարցնի, ո՛չ ոք, ո՛չ ոք… Գութը, սերը, խիմերա է, դատարկ բառեր: Վա՛յ նրան, ովայդ պատրանքը կունենա և ման կգա այս կյանքի անդունդների վրայով. ահա ինձ պես կընկնի այս հատակը:

Էհ, հիմար մտքեր: Որոշում եմ ոչինչ չմտածել և քնել: Բայց քունս չի տանում: Անտառը լուռ է: Ծառերը անշարժ ականջ են դնում մթնշաղի հեքիաթներին երբեմն իրար «սուս» ասելով:

Ահա վայել սկսեց գիշերահավը: Կիսամթի մեջ լողում է չղջիկը նետվող քարի նման: Նայում եմ նրան և մանկությունս միտս է ընկնում. չղջիկը միշտ կապված է մանկության հուշերիս հետ: Հիշում եմ շատ այսպիսի մթնշաղ իրիկուններ, երբ մայրս տան դռան քարին նստած զրույց էր անում մեր հարևանուհու հետ: Ահա հարևանի տղան դաշտից տուն է բերում նախիրից հետ մնացած կովը: Մենք, ուրախ մանուկներ, խաղից հարբած ահա քաշվել ենք պատի տակ և մեզանից մեկը ահա սկսում է մի հեքիաթ. զարհուրելի՜ և հետաքրքիր. և քանի պատմում է՝ այնքան ահը գալիս պաշարում է մեզ: Մեզանից մի քանի քայլ հեռու՝ կարծես սկսվում է այդ հեքիաթական աշխարհը, լի հազար ու մի հրաշքներով ու ահերով:— Հապա՞, ո՞վ կարող է մենակ գնալ դեպի դաշտ, մինչև որ ետ կանչենք,— առաջարկում է մեզանից մեկը: Ոչ ոք չի համաձայնվում: Այդ ժամանակ լսվում էր մորս խաղաղ ձայնը, որ մեզ կանչում

էր ներս, թեյի: Բայց ո՞վ կարող էր թեյ խմել. շորերով, հոգնած ընկնում էինք քնում, մինչև որ մայրս զոռով մեզ հանվեցնում, քաշ էր տալիս անկողին և ծածկում:

— Անըն հոր և որթո և հոգուն սրբո, ամեն[3] — խաչակնքում էր մեզ և մենք քնում էին երջանիկ հրեշտակների պես: Օ՜, խաղաղ, անմեղ և հրաշալի մանկություն, հիմի էլ ջերմացնում ես իմ սառած մարմինս: Կուչ եմ գալիս տերևների մեջ և աշխատում փաթաթվել ջերմ հիշողություններովս, որ դառն իրականությունը սառչի ջրի նման, չթրջի ինձ և սառեցնի մարմինս: Անտառի ձորերը լռում են, ուշ երեկո է, պետք է գնալ տուն կամ ուրիշ տեղ: Վեր եմ կենում. ամբողջ մարմինս՝ կարծես ոսկրով լի պարկ լինի՝ լխկում է ու ցավում: Քայլերս ուղղում եմ դեպի կխտարների ցանկապատը: Ահա մթի մեջ երևում են նրանց խաղաղ սիլուետները: Բարի գիշեր, սիրելիներս. ասում եմ նրանց և անցնում կողքով: Տրամադրությունս խաղաղ է, ինչպես վերքերի ցավը, որ մի առ ժամ դադարում է:Հոգիս լիքն է գուրգուրանքով: Մտածում եմ այդ կխտարների մասին: Ի՜նչ համակրելի ձեռնարկ է այդ կխտարներ պահելը: Փռվել են մի ցանցապատի մեջ. եկողը գալիս ձեռը կոխում ցանցերի մեջ և մի կտոր հաց է տալիս կխտարներին: Երեխաների համար իսկական հաճույք է այդ գործը:

Հանկարծ ոտս մի փափուկ բանի է դիպչում: Կռանում եմ և վերցնում: Ո՜վ տիեզերքի լուսատուներ, հավաքվեցեք այս վեհաշուք հանդեսը դիտելու… մի ահագին կտոր հաց: Երևի մոռացել են կխտարներին տալու: Կամ հացավաճառ կինը, որից երեխաների ուղեկից ծնողները գնում են կխտարների համար՝ վայր է գցել: Ով տիեզերքի լուսատուներ… լուսատուներ տիեզերքի ո՜վ… Եկե՛ք, եկե՛ք, եկե՛ք գեղեցիկ այս ահագին, ահագնագույն հացի կտորը... Եվ վազում եմ՝ հացը կռանս տակին: Մոտ եմ տանս: Արդյոք ինչպես կբարեհաճեք ընթրել, պարոն, սեղանատա՞նը թե բացօթյա։— Սեղանատա՞նը.— բայց ժամի քանի՞սն է… Այո, ժամացույց չունեմ, բայց այդ ոչինչ… լավ կլիներ բացօթյա, բայց որովհետև հոգնած եմ՝ հոգ տարեք սեղանատանը ընթրիքը տալու:

Եվ… սանդուղքներով բարձրանում եմ: Այսօր շատ հերոսություն եմ արել, բայց ամենամեծը միջանցքից անձայն և աննկատ անցնելն է: Զգույշ, թե չէ սարսափելի բան է սպասում քեզ խոհանոցում:

Ով հացակորույս կին, քո ջերմ աղոթքներին եմ ապավինում: Դու, որ ինձ հաց տվիր, աղոթիր նաև, որ մարմինս փոշիանա, դառնա հյուլե, որ դյուրին մտնեմ դռան ծակից, աննկատ անցնեմ միջանցքը և անձայն սահեմ սենյակիս դռնով: Ո՜վ բարեգութ կին, սիրտս դողում է, ուրախ և հացի տեր երջանիկ սիրտս: Ի՜նչ հրաշալի ընթրիք կունենամ՝ եթե տանտիկինս մտնելս չնկատի:

Բանալին կամաց շուռ եմ տալիս: Դուռը ճռռաց, դավաճանությո՜ւն, բռնվեցի: Բաց եմ անում դուռը. մութն է ներսը: Լույս չկա ո՜չ խոհանոցում, ո՜չ էլ տանտիկնոջ սենյակում: Ո՜վ երջանկություն, տանը չէ գազանը: Եվ այս իրիկուն, ստվերների հետ սենյակիս մեջ առանձին տիեզերական ընթրիքի նստեցի ո՜վ բարեկամներ: Բայց լուցկի չկա… ով բարեկամներ... Էհե, մթո՞ւմ պիտի նստեմ, ի՞նչ է, ո՜վ բարեկամներ, լուցկին ո՞ւր է: Աշխարհիդատավորներ, հաշիվ տվեք ինձ, լուցկին ո՞ւր է: Լամպն էլ չկա: Ատելի արարածն ո՞ւր է դրել լամպը: Շոշափում եմ սեղանը, ո՜չ լուցկի կա, ո՜չ լամպ: Դե գնա. գազանը լամպն ու լուցկին տարել է, որ մթում մնամ: Ի՜նչ վիրավորանք. սա արդեն չափից անցավ: Սպասիր, ջադու: Լա՜վ: Գլխավորը, ոչ թե իր ամսավարձն է ուզում դուրս քաշել, այլ ուղղակի վիրավորել: Ուրեմն ես մարդ չեմ: Լա՜վ: Հերդ անիծած, շան կնիկ: Դուրս եմ գալիս միջանցք. խոհանոցը կողպ է: Ուրեմն պետք է ամբողջ գիշեր մթում նստեմ կամ քնեմ: Այն ինչ՝ եթե լույս ունենայի՝ կնստեի, հիանալի կընթրեի և կվերջացնեի կիսատ հոդվածս կովկասյան մի լրագրի համար, որից մի քանի ռուբլու հույս ունեմ: Շոշափելով գտնում եմ աթոռը և նստում: Հազիվ էր տրամադրությունս մի քիչ լավացել, ահա նորից ամպեց: Ի՜նչ վիրավորանք, ի՜նչ ցանկություն վիրավորելու… Լա՜վ: Բարկությունից կրծում եմ հացի կտորը: Ճիշտ է, սոված եմ, բայց ուտելով ավելի զայրույթս եմ ուզում հագեցնել, քան սոված թությունս: Ուտում եմ և միաժամ քննում տանտիկնոջ վարմունքը: Միթե՞ միայն վիրավորանք է սա և ոչ

սպառնալիք: Գուցե սա նախաբանն է մի մեծ վճռի: Դատարա՞ն… սարսափելի է: Օ՜ֆ, այս վիրավորանքը կտանեմ, միայն դատարան չլինի: Ի՞նչ կմտածի օրիորդ Գալաչյանը… Հը՜մ օրիորդ Գալաչյանը: Բայց քեզ ի՞նչ, թե ինչ կմտածի: Ահա երկու ամիս է հնացած շորերիդ պատճառով չես համարձակվում հանդիպել նրան. քո ինչի՞ն է պետք, թե ինչ է մտածելու քո մասին:

Այս օրիորդը իմ քնքույշ սերն է: Բայց հուսահատ, տխուր սերս:

Բնագիտության ուսանողուհի է, այծյամի պես նրբակազմ և աստղի պես գեղեցիկ: Այնքան սուզվել եմ դեպի հատակը, որ էլ չեմ կարողանում բարձրանալ նրա լուսավոր աշխարհը: Ամաչում եմ՝ թե՛ իմ շորերիցս, թե՛ վիճակիցս, թե՛ սովածությունիցս: Նա ինձ չի էլ ընդունի այնպես, ինչպես մեր հանդիպման առաջին օրը: Երեք տարի առաջ, երբ ես բացի հացից նաև համալսարան հաճախելու իրավունք ունեի՝ մի օր կեսօրից հետո նստած էի կենդանաբանության աշխատանոցում: Անդամահատում էի մի փշամորթ. զբաղված էի, տարված. այդ ժամանակ մեկը, որին չէի նկատում, նույնպես հետաքրքիր աչքերով նայելիս էր լինում իմ գործին:

— Ի՜նչ գեղեցիկ նկարել եք, պարոն,— հանկարծ դիմեց ինձ ռուսերեն մի օրիորդ, ցույց տալով մի փշամորթի նկար, որ առաջուց պատրաստել էի (ես շատ ջերմեռանդ ուսանող էի): Ասավ և կռացավ նկարս նայելու: Նրա՝ նորեկի, անփորձ շարժուձևերը, մետաքսե մազերը և անկեղծ ժպտալի աչքերը սիրուն հեքիաթի պես մնացին հիշողությանս մեջ: Դա օրիորդ Գալաչյանն էր. բանաստեղծությունն սկսվեց հոգուս մեջ, բայց զարհուրելի մի բան շուտով կոտրեց նրա թևերը. օրիորդը հարուստ էր: Օ՜ֆ, ինչ թշվառություն է հարստություն չունևորի համար: Ապա հենց այդ աղջկա պատկերը եկավ հանկարծ, եկավ օրորվեց աչքերիս դիմաց: Որքան անհասանելի տեսիլ: Ես սոված, արհամարհված մի էակ, նա հարուստ, գեղեցիկ, շատերի խելքն ու միտքը հետը տանող մի եղնիկ:

Երեք ամիս առաջ, մի երջանիկ ամիս, երբ ես ամեն օր իրավունք ունեի հացով, պանիրով և առատ թեյով ճաշելու, երբ սենյակիս վարձը լիովին վճարեցի՝ երեկոները գնում էի նրա պատուհանի տակով անցնելու: Չէի տեսնում նրան, պատուհանը բարձր էր, բայց ճրագի ոսկի, խաղաղ լույսը հրդեհում էր սրտիս անիրագործելի, բայց անդիմադրելի երազը... Ափսո՜ս, ափսո՜ս օրեր. ի՞նչ երջանիկ էի այդ ամիսը իմ քառասուն ֆրանկով և ծովածավալ անհուն երազներով:

Բայց մի բան ճիշտ է, և այդ բախտիցս է, որ սերս չի տանջում ինձ: Հուսահատ եմ, ահա գաղտնիքը: Էլ ի՞նչ տանջանք այն մարդու համար ով օվկիանոսի հատակն է ընկղմել. այդ տեսակ մարդը մի խնդիր միայն ունի լուծելու, շուտով ցրվել կյանքի ծաղկափթիթ երազները և խեղդվել: Աշխատում եմ շուտով հրաժարվել այդ հրապույրից, համարել մի օդային ամրոց և մխիթարվել, որ իրականություն չէ և մեռնել, չքանալ: Ինչ ուզում է ասեն մարդիկ, նախապաշարմունքը զորեղ բան է. գոնե գործնականում: Ախր ինչպես կարող եմ երազել այդ աղջկա սիրո մասին, երբ նրա հետ միասին փողոց դուրս գալու ամենատարրական հանգամանքը չունեմ — հագուստ: Թող ճառեն տեսաբանները մարդկային հարաբերությունների մասին, բայց իմ այս խունացած, միակ կոճակով, օձիքը յուղոտ պիջակս, տոտերը գզգզված շալվարս և պատռած կոշիկս, ամեն բան կվճռեն: Ես ինքս չեմ սիրում իմ հագուստը, եսոր ինձ սիրում եմ. նա ինչպե՞ս կհանդուրժի ինձ հետ միասին մարդամեջ դուրս գալ: Մի խոսքով չեմ համարձակվում գնալ նրան այցի. բավական է այնտեղ հանդիպեմ մեկին, որ ինքնասիրությունս այրվի նրա արհամարհոտ հայացքից:

Հացի կեսը կերել եմ արդեն: Էլ չեմ կարող ուտել, թեև սոված եմ. կշտահամ եմ, ախորժակ չկա: Խմել եմ ուզում: Մթան մեջ գտնում եմ ջրի շիշը: Սա ի՞նչ բան է. ջուր չկա մեջը: Մոտենում եմ լվացարանի սափորին. կատարյալ անջրդի անապատ: Էա՜վ: Ջուր էլ չի լցրել քավթառը: Աստծու առատ ջուրը, անգամ, որով ողողված է երկրագնդիս մեծ մասը, խնայված է ինձ: Վերջապես ամեն բան արված է՝ արհամարհանքը գռեհիկ ձևով արտահայտելու համար: Սակայն ծարավ եմ, պետք է տրաքվե՞լ, թե չէ…

Ժամի 10-ն է, ամենքը քնում են. ամբողջ Շվեյցարիան հավի պես քնում է այս ժամին. ո՞ւր գնամ: Փրկությունս Սեն-Ֆրանսուա հրապարակն է. պետք է իջնել մինչև այնտեղ, կռանթից խմել և բարձրանալ. իսկ եթե գիշերը ծարավեի՝ ուրեմն մի հսկում կունենայի մինչև լույս: Թյո՛ւ, հիմար կյանք:

Վեր եմ կենում տեղից. ոտներս ցավում են, կարծես փետացած լինեն. հիմի մի ջրի համար եկ ու իջիր մինչև Սեն-Ֆրանսուա և այնտեղից զառիվերով քաշ եկ դեպի տուն: Սոսկալի է. բայց բոլոր սոսկալիները ինձ համար են: Մթով իջնում եմ սանդուղքներով և քայլերիս չափով տնքում. օ՜ֆ, քավթառ, օ՜ֆ, քավթառ, օ՜ֆ, քավթառ: Այս «օ՜ֆ, քավթառը» ճամփին երգի է վերածվում. և քթիս տակ մռլտալով իջնում եմ Սեն-Ֆրանսուա:

Չգիտեմ հոգի՞ս է սովոր վիրավորանքի, թե ինչ — էլ չեմ ընկճվում բոլորովին: Գուցե պատճառն հոգուս այն գաղտնաածածուկ ուժն է, որ վաղուց նյութվում և չեմ ուզում մեռնել*):

Եվ քաշ եմ գալիս կյանքի մեջ: Թե երբ պիտի հասնի հատուցման օրը՝ չգիտեմ. միայն որ շատ հեռու է դա՝ երևում է արդեն:

Է՜հ, սպասիր և տառապիր: Իջնում եմ հրապարակ, մոտենում մեջտեղի տաճարին, աղբյուրից ջուր խմում և բարձրանում վերև՝ դեպի տուն:

Անկողնումս եմ արդեն, հոգնա՜ծ, քունս տանում է. արքայական քունս: Չէ որ տառապեցի, վաստակեցի, կերա, խմեցի: Էլի՞չս է պակաս: Եվ քնում եմ ինչպես գեներալը պանծալի հաղթությունից հետո:

Առավոտը շատ վաղ զարթնեցի: Ինչպե՞ս կարելի է ուշ. չէ որ սեղանիս վրա ինձ է սպասում արքայական նախաճաշիկը: Արդեն աչքս նրա վրա է: Որովհետև նա է իմ հույսն ու ապագան, իմ ընկերը, իմ իդեալը, իմ ամեն ինչը — այդ մի կտոր հացի մնացորդը. դրանով ես այսօր ազատ եմ ինչպես երկնքի թռչուն: Ուրախ զգացումը արևի ջերմության պես հոսում, ծծվում է երակներիս մեջ՝ երբ նայում եմ այդ հացի կտորին: Հարազատի պես է նա: Նա պիտի պահի ինձ այսօր. նա այս աշխարհում հավատարիմս, հույսս, ապագաս: Ա՜խ, նստած է պահապանի նման: Գիտե դրությունս և չի արհամարհում ինձ: Հացի՜ կտոր, միայն սովածը, միայնակը, լքվածը գիտե, թե ինչքան վեհություն և ջերմություն կա քո մեջ: Դու ես պահում մարդկությունը, համեստ ու խորախորհուրդ նյութի կտոր, դու ես պահում գիտությունը, փիլիսոփայությունը, գեղարվեստը, մարդկային հոգին: Դու ես ջերմացնում աշխարհը, շենացնում, լցնում ուրախությամբ: Թանկագին հացի կտոր:

Այսօր ուրախ եմ, ինչպես երկնքի թռչուն: Բայց «երկնքի թռչուն», լսում ես այն ափսեների շրխկոցը խոհանոցից: Այդ նա է, տանտիկինը, քո մահի կարապետը: Ինչպես մայիսյան պսպղուն երկնքին մի սև ամպ հասնի, այնպես մռայլ տխրությունը գալիս է լցվում սենյակս: Պատրանքն ու բանաստեղծությունը ցրվում են, միտքս արթնանում է մռայլ թռչունի պես: Օ՜ֆ, անհանդուրժելի իրականություն: Ո՛չ, վեր կաց, «երկնքի թռչուն» և միտքդ զբաղեցրու մի ամենամեծ առեղծվածով, հայտնագործիր և դարուս ամենամեծ գիտությունը, 12 ֆրանկ, թե չէ… Սարսափում եմ այդ թե չէից և անկողնից վեր ցատկում:

Երկնքի՜ թռչուն, ո՞ւր են մետաքսե գուլպաներդ: Ահա այստեղ են, պատռտած վերմակիդ աստառը: Փաթաթիր ոտներդ: Շապիկդ արդեն երկու շաբաթ է առվի երես չի տեսել, ո՜վ անհոգ երկնքի թռչուն: Այսօր բարեհաճիր առվի մեջ ցողել և մզել: Ա՛յ, սեղանի վրա մի քիչ սպիտակ թել կա՝ մնացած փառավոր օրերից.արդյոք ժամ չէ կարել շալվարիդ պատռածը, ո՜վ երկնքի գեղատեսիլ ջրային հեղեղներից դեռ անվնաս՝ ունի այնքան սևություն, որ թռչուն: Եթե չեմ սխալվում, թանաքամանիդ բովանդակությունը կներկե այդ ճերմակ թելերը, ով երկնքի քաղցրախոս թռչուն: Այսօր, բոլոր օրերը խմբված՝ եկել են ականատեսելու հանդեսներից ամենաշքեղը, ո՜վ թռչնապետ. քանի որ դու ճարպկություն ունես վերանորոգելու աստվածային հանդերձներդ*), գուցե գերաստվածային հանճարով նաև ամպափթիթ ճերմակի փոխես արջնաթույր օձիքդ: Օ՜, անիծվի մարդկության քմահաճ

ճաշակը, որ սև օձիքներ չի հաճում հանդուրժել. ի՜նչ հոյակապ դիպված. ահա օձիքս ավելի արջնաթույր, քան ձյունաթույր է: Ո՜վ Փարիզի աստվածներ, համակարպեցեք օձիքիս տիեզերքի բոլոր օձիքները աշնանային մռայլով:

Սակայն ժամ չէ օձիքիս նորոգչության. քանի որ սենյակս անջրդի է և առուները հեռաստանումն են: Մի աստվածային սպասում կվայելեր ինձ: Եվ ես սպասում եմ՝ շալվարս կարկատելով:

Սակայն ինչ է այն թղթի պատառը՝ կարապի փետրի ճերմակությամբ ընկած սեղանիս տակ:

Ի՞նչ բանի ես, նամա՜կ, վերցրու... վրա եմ ընկնում նամակին, որ գիշերս մթում դիպել վայր եմ գցել: Փրկությո՜ւն, փրկությո՜ւն: Հասցեն իմս է: Աշխարհի բոլոր տիրացուներ, գոհությունն մատուցեք բարձրյալին: Հասցեն իմս է, պատվիրած: Վեց ամիս մեռնելուց հետո, կենդանի եմ. տե՛ս հիշել են ինձ և գրել:

Բայց, ո՛չ, հանգստացե՛ք տիրացունե՛ր, քաղաքի նամակ է… Ձեռներս թուլանում են բաց եմ անում.— «Պարո՛ն, եթե մինչև ամսիս տասը սենյակի հաշիվը չմաքրեք, ստիպված կդիմեմ կտրուկ միջոցների: Մ. Ռեյմոն»:

Կարկատանս կիսատ մնաց: Առաջին միտքս այն եղավ, որ հացս քթիցս եկավ: Այո՛, մի երջանիկ օր էր այսօր, այն էլ ահա այսպես փչացրին: Հանգիստ, դադար չկա աշխարհում ինձ համար: Ի՛նչ եք ուզում ինձնից, անասունն՛ե՛ր, անսիրտնե՛ր, տմարդինե՛ր. թողե՛ք մի կտոր հացս տրաքվեմ գոնե:

Այսօր ամսի 5-ն է, ուրեմն հինգ օր ժամանակ ունեմ. պետք է 12 ֆրանկ ստեղծել: Այո, ստեղծել, թե ոչ մի տեղից գտնելու հնար չկա։Ուսանողները վաղուց հոտն առել, գիտեն դրությունս, ուստի և խուսափում են ինչպես խոլեր ընկած հիվանդից: Մի մասը արդեն երկու տարի է կարճատես է, չի բարևում ինձ, եթե քիթ քթի չենք հանդիպում. մի մասն էլ «սաստիկ զբաղված» է, չի երևում: Այստեղի ուսանողության հինգերորդ անիվն եմ. ավելորդ և անախորժ մարդ: Նրանցից մեծ մասը նպաստառու է. ուրիշից է ձեռք բերում ճաշի գնալու, նավակ նստելու, համալսարան մտնելու և պանսիոններում գերմանուհիների և անգլուհիների ծանոթությունը վայելելու իրավունքը — փողը: Բայց ես, որ կորցրել եմ այդ նպաստը և բախտի չար բերումով կարոտ եմ նրանց նպաստին՝ ավելորդ և անախորժ մարդ եմ: Նրանց այս հոյակապ փիլիսոփայությունը մի ժամանակ դառնացնում էր սիրտս, հետո արհամարհելի. իսկ հիմի մոռացել եմ երկուսն էլ:

Բայց պետք է ճարել, քթից հանել 12 ֆրանկը... Ինչ անեմ, թե էլի գործ եմ փնտրում, Շվեյցարիա գո՞րծ: Հը՞, բուռդ դեմ արա. օտարահպատա՞կ ես՝ վերջացավ, գործ չկա: Շատ հազիվ, հրաշքով կարելի է գործ գտնել. իսկ չկարողացա հրաշագործ լինել:

Խորհրդածությունները վերջ չունեն: Պետք է տանից դուր գալ: Դարան մտածի պես հարմար առիթի եմ սպասում, որ ծլկեմ: Բախտիցս տանտիկինը գնացել է սենյակ և պառկել է, երևի դեռ հոգնած է երեկվա զբոսանքից: Սանդուղքներից իջնելիս, ըստ սովորության նայում եմ նամակատուփը, ոչինչ չի լինում իմ հասցեով՝ ըստ սովորության. նույնպես ըստ սովորության հառաչում եմ և դուրս գալիս փողոց: Միակ նորությունը այսօրի կյանքիս այն է, որ անլվա եմ և դիմացի մայթով եմ իջնում փոստը. թե չէ ամեն բան նույնն է՝ ինչ երեկ: Եվ որովհետև միլիոն անգամ հառաչել եմ կյանքիս միօրինակ, տաղտուկ միակերպության համար՝ այսօր էլ հառաչում եմ, ինչպես տերտերը իր սովորական սաղմոսն ասի:

Բայց հացը ինչո՞ւ տանը թողի՛ր, դմբո՛, կայծակը գլխիս է տալիս: Հացը ինչո՞ւ թողիր տանը, իշի գլուխ: Թքում եմ գետնին և հետ վազում: Ով գիտե, աշխարք չի, շան կնիկը կառնի և կածի: Ո՛չ, չեմ թողնի քեզ, սիրելիս, հավատարիմս, այս գորշ, անուրախ կյանքիս լույսը: Թեկուզ կրակի բոցերում ընկած լինես՝կհանեմ քեզ կբերեմ: Եվ ոչ մի տանտիկին ուժ չի ունենա դեմս կենալու, քանի որ ես հերոս եմ:

Այո՛, հերո՛ս եմ ես,— շեշտում եմ և մտնում ներս: Այո՛, հերոս եմ ես,— և մտնում եմ սենյակս: Այո՛, հերոս եմ ես,— անցնում եմ զարմացած տանտիկնոջ առջևով: Այո՛, հերոս եմ ես — գոռում եմ սանդուղքներին: Հերոս եմ ես,— երգում եմ փողոցում և նորից իջնում նույն մայթով:

— Դու ոչ թե հերոս ես, այլ խիստ կուշտ,— վճռում եմ հանկարծ՝ հիշելով 12 ֆրանկը և նորից տխրում:

Այսօր նյութականս ապահով է: Իրավունք կունենայի հոգեկանիս հանձնվել, մտածել կամ երազել՝ եթե միայն մի այլ նյութական խոչընդոտ դեմս չելներ: Անիծյալ 12 ֆրանկի հարցը: Որտեղի՞ց ստեղծեմ: Պետք է փոխառության դիմել: Փոխառությա՛ն: Քանի ժամանակ է կորցրել եմ այդ իրավունքը ևս: Փոխառությունը փող ունեցողի համար է: Ես վաղուց եմ կորցրել այդ փողը: Մնում է Կովկասից որևէ բան սպասեմ, ինչ որ լինի, այս հինգ օրում պետք է լինի: Թե չէ այստեղ փող գտնելը հրաշք է: Վեց տեղ դիմել եմ Կովկաս և ամեն օր ծոցատետրիս հաշվով որևէ տեղի հերթն է փողը ինձ հասնելու, եթե ուղարկած լինեն, կամ այսօր, վաղը սկսեն ուղարկելը:

Այսօր Թիֆլիսի և Երևանի երկու բարեկամիս հերթն է:

Աստված իմ, արդեն հոգնած եմ, խեղճ եմ, շուտով ուղարկել տուր, ժամանակ է, մեռա ես: Վեց ամիս է չեն ուղարկում: Վեց ամիս է ամեն օր սանդուղքներից իջնելիս՝ կանոնապես նայում եմ նամակատուփի ծակից. նամակ չկա. իր ժամանակին գնում եմ փոստ. դրամ չկա, գրքերս ծախում, նամակ եմ գրում, հեռագրում՝ պատասխան չկա: Ի՜նչ անտարբեր ցեղ ենք, անկարեկից, անզգա… Ասենք բոլոր ազգերը այդպես են: Բոլոր մարդիկ այդպես են: Ճամփես ծուռ է գնացել չեմ նկատել հիմի մոլորվել եմ, անօգնական ընկել մի անապատ. գոռում եմ, կանչում՝ օգնություն չկա:

Փոստում հարցրի. «ոչինչ չկա» ասաց նույն մեքենական ձևով պաշտոնյան և անցավ մյուս բաժինը, ձեռը դրեց ընկերոջ ուսին և մի հանաք շշնջաց նրա ականջին: Հանաքը իմ մասին չէրԹեկուզ ծաղր լիներ, էլի իմ մասին չէր լինի: Ո՞վ է հիմի զբաղվում ինձնով: Ծաղրատեղ անգամ չունիմ հիմի, ոչինչ եմ, ոչինչ, ոչինչ: Հիմա կարծես գերեզմանում լինեմ. չկամ, մեռած եմ. եթե կենդանի լինեի, մի երկու տող կգրեին թե. «Մեռիր, սատկիր, փող չկա քեզ ուղարկելու»:

Թրջված հավի պես դուրս եմ գալիս փոստից: Հասնելով դռներին՝ մի որոշ տեղը արձակում եմ սովորական հառաչանքս, որ ամեն օր այդտեղ մի ծիսական կարգ է ինձ համար, և դուրս եմ գալիս:

Կյանքս ձանձրալի ժամացույցի կանոնավոր ընթացքն ունի. նման տաղտկալի, անախորժ դեպքերը վերից կաթող ջրի կաթիլների պես՝ միօրինակ չափով կաթում են հոգուս մեջ և սառցնում են, թմրեցնում և մաշում: Առաջ շատ էի դիմադրում, թպրտում այդ կաթիլների տակ, աղաղակում էի, բողոքում. հիմի մրսում եմ տաք ջրի տակ և համակերպվել եմ: Գիտեմ սրա վերջը հոգեկան և մարմնական մահն է. բայց գիտենալս երկու գրոշ չարժե: Պետք է ուժ ունենալ: Այդ ուժի սիմվոլը դրամն է. ունես այդ սիմվոլը՝ ուժեղ ես. չունես՝ մեռի՛ր գնա՜: Ա՛յ տե՛ս այն տրամվայ նստող լիքը այտերով ու սրիկայադեմ լակոտը իմ համեմատությամբ արքայորդի. դրամ ունի: Ոչ մի 12 ֆրանկի խնդիր չի համարձակվում մոտենալ նրա մռութներին. կարիքի գոյությունն անգամ չգիտե:

Կանգնած եմ Սեն-Ֆրանսուայի մեջտեղ, կարծես մարդկության բեմի վրա և հարայ եմ տալիս. ինչո՞ւ չունեմ այդ ուժը: Ի՞նչս է պակաս, խելքս, հնարագիտությո՞ւնս: Միթե՞ աշխարհս լի չէ հիմարներով, ապուշներով, անտաղանդներով, որ ինձնից շատ երջանիկ կյանք են վարում: Դե ուրեմն հիմարի մեկն էլ ես. ինչու՞ ես էլ նրանց վայելքի մի փշուրն անգամ չունեմ: Չեմ կարծում թե այնքան անհույս հիմար լինեմ, որ չկարողանամ անունս ստորագրել գործավարիս ներկայացրած զանազան թղթերի տակ՝ ահա այս խոլերիկ մսի ու ոսկորների անձև պարկի նման, որ քրտինքը սրբելով անցնում է մոտովս: Մի՞թե աշխարհիս ամենանվաստ մարդու չափ հոգեկան խորություն չունեմ: Մի բան կամ վերջապես, եթե ուրիշի սառն աչքով անգամ նայեմ վրաս. բայց ինչո՞ւ եմ մոլորվել, թրջվել, ճնշվել այս յոթը քարի

արանքում. ինչո՞ւ չեմ կարողանումտակից դուրս գալ. ինչո՞ւ եմ այսքան տառապում. ի՞նչ շան կյանք է սա վերջապես: Մի պտուտակ խանգարված է անշուշտ կյանքիս մեքենայի մեջ, թե չէ էլ քոսոտ մարդ չմնաց, որ իմ բաժին կյանքը չվայելեր՝ իր բաժինը դեռ մի կողմ: Երևի այս պտուտակի խանգարումը ամենքի հետ էլ պատահում է, ինչպես ստամոքսի խանգարում. բայց նրանք գիտեն դրա դեղը. ես՝ չէ: Գուցե ես եմ միայն, որ կյանքի սեղանին մոտենալիս քուրքս չեմ հանում: Չէ, մի բան կա, որ չկար, մի կողմ պիտի դնել այս աշխարհի վայելքին մոտենալիս:

Լավ գիտակցում եմ, որ մեջս երկու մարդ կա. առաջ զգում էի միայն: Մինչև իսկ տեսնում եմ նրանց դեմքը: Մեկը ինձ է նման ինչպես խնձոր կիսած, քաղցած, աչքերը վրան ընկած, դեղներես, խեղճ, մոլոր: Մյուսը խավարի մեջ է. չեմ տեսնում դեմքը, լավ չեմ ճանաչում նրան, երբեմն միայն կիսամշուշի մեջ գծագրվում է տարօրինակ, լուրջ և տարերային ոգորումների մեջ կծկվող դեմքի ուրվագծերը. սակայն լավ չեմ որոշում, զգում եմ նրա գոյությունը: Ուստի և լավ չեմ հասկանում նրան, այդ տարերային մարդուն: Մյուս մարդը ինձ է նման, միշտ լսում է ինձ, միշտ համակարծիք է ինձ: Ինչ փիլիսոփայություն ունի իմ աշխարհայացքը. բարեպաշտ հիմարի մեկն է ականջը կախում է ճշմարտության քարոզի առաջ և հավատում է մարդկային առաքինության: Ուղտի պես սակավապետ է և ճգնավորի պես ինքնուրաց: Այդ նախապաշարմունքի գերին ամեն բոպե թևիցս քաշում է. սուս, այդ ամոթ է, այդ անպատշաճ է, այդ քո իրավունքը չէ:

Չգիտեմ ինչու ահա կանգնեցրել է ինձ այս հիմար հրապարակի վրա: Ես էլ կանգնել եմ ավանակի նման այս շոգում և անշարժ մոլորվել:

Ահա կանգնեցի. հիմի, հարցնում եմ ճգնավորին*: Հիմի մտածի՛ր թե որտեղից գտնես 12 ֆրանկը,— պատասխանում է նա:— Մտածեցի: Ուրիշ բան ունե՞ս ասելու ավելի հանճարեղ քան այդ ասածդ:— Ա՛յ, լավ չի լինի գնաս տուն և հոդվածդ շարունակես:

— Հետո՞:— Հետո ուղարկիր Թիֆլիս տպելու:

— Իսկ դրամը ե՞րբ ստանամ:

— Գնա՛, գնա՛, իշի գլուխ:

Գնում եմ:

Ահա դարձյալ կանգնած եմ մի փողոցի անկյունում:

— Ինչո՞ւ կանգնեցիր:

Ախ, կանգնելդ մեծ նշանակություն ունի գերագույն նպատակների համար: Ա՛յ, օրինակ, նայում ես դիմացի խանութի դռան կանգնած գործակատարի քթին, որ կարմիր է: Ահա ինչո՛ւ կանգնեցիր:— Գնա՛, հիմար, գնա՛, կանգնելու տեղ:

Ահա և երկրորդ փողոցը: Հիմի էլ կանգնած եմ մի խանութի առաջ և. ինչո՞ւ կանգնեցիր. դարձյա՞լ գործակատարի կարմիր քիթը դիտելու: Հասկացա. հիմի ուսումնասիրում ես այն պառավ խանութպանուհու շլինքը, որ նման է հնդուհավի շլնքի՞… Այո, երևելի գործ, հոդվածիդ համար մեծ նյութ է*):

Է՛հ, հիմարի կտոր: Ահա քո կյանքը: Այսօրդ երեկիդ նման, վաղդ՝ այսօրիդ: Աստված իմ, ես կմեռնեմ այս զարհուրելի միօրինակությունից, այս անփոփոխ, անխիղճ, անհույս միօրինակությունից: Արդեն անգիր գիտեմ այս ամենը. անգիր գիտեմ այսօրս, էգուցս, կյանքի մանրամասները: Եվ ոչ մի տեղից նորույթ, հույս, փոփոխություն, փրկություն չկա: Չկա, որ ճաքես՝ չկա:

Այո՛, քանի այսպես եմ՝ ոչ մի հույս չկա: Երբ Սերոբյանից մի ֆրանկ պարտք խնդրելում պատշաճի ու անպատշաճի հարցեր եմ մեջ բերում. երբ Ճզմաճյանից 12 ֆրանկ ուզելում թիթեռնի չափ նրբանկատ և ինքնասեր եմ, երբ Բեկտաբեկովից չեմ վերցնում այդ գումարը բարոյական նկատումներով — ուրեմն ինձ համար ոչ մի հույս չկա: Մնում է փողոցում գտնել տենչած դրամը: Փողոցում. ո՞վ պիտի գցի. սանտիմանոց շվեյցարացի՞ն, փեշդ դեմ արա: Բայց եթե փողոցումն էլ գտնեմ՝ կյուրացնե՞մ: Հավանորեն տիրոջը կտամ: Չէ՞, պարոն «բարեպաշտ»: (Ներսես երկու մարդուց մեկը աչքերը ամոթխածությամբ գցում է գետի՛ն): Իհարկե, հետ կտաս. քանի որ այդպես է գրած գրքերում և այդպես են խոսում կյանքում և տերտերը փոքր ժամանակդ ասել է. մի՛ գողանար: Առաքինությո՞ւն են ասում, ինչ, դրա նման մի զխկում կա. ասում են եթե նա իմանա, որ մարդ գտած փողը տիրոջը չի տվել, շատ բեդամաղ կլինի և ուրիշ շատ բան կլինի, ասում են:

— Իսկ բանտի կամ արտաքսումի հետ ինչպե՞ս ես, պարոն բարեպաշտ: Չէ՞ որ եթե տանտիկինդ գանգատ տա՝ Շվեյցարիայումդրա համար կամ բանտ է, կամ երկրից արտաքսում*): Այս երկիրը սիրում է աղքատների մահը, բայց աղքատներին՝ ոչ: Գնա, գնա, իշի գլուխ, հիմի 12 ֆրանկ ցանած էլ չկա, որ տիրոջը հետ տաս կամ ոչ:

Եվ գնում եմ առաջ: Փողոցները էլի այն փողոցներն են. ոչ մի նոր բան, նոր միտք, նոր հնար չկա նրանց մեջ վիճակիս համար. կակազում եմ: Հիշում եմ վանդակ դրած վագրերին կամ գայլերին, որ մռայլ տեսքով շարունակ գնում գալիս են վանդակում, փորձ անում դուրս գալ, շարունակ ռեխները կպչում է սառը վանդակին, ետ են տանում, նորից կպչում, էլի դառնում և այդպես շարունակ, անվերջ: Ես էլ վանդակ ընկած մի գազան եմ և ելք եմ փնտրում*. սովորույթ է դառել պատեպատ ընկնելը, բայց մոռացել եմ, որ դրանից օգուտ չկա: Անում եմ, որ չկատաղեմ: Է՛հ, գնա, արի, որ չկատաղես, սիրելիս: Հիմի ետ դառ: Այ այդպես: Ետ դառնալուդ մեջ տիեզերական ակնկալումներ կան. այո, ետ դառ, սիրելիս: Արյունը խփում է գլուխս. թող խփի. վազում եմ*. վազիր: Հնար չկա, չկա և չկա: «Հնար չկա» գոռում եմ նորից: Ասացեք պարոն Ռեյմոն, մի՞թե հնար չկա,— դիմում եմ դեմս եկող մի պատանու:

— Ինչպե՞ս, պարոն:

— Ասում եմ, մի՞թե հնար չկա այստեղից Սեն-Ֆրանսուա գնալու, շուռ եմ տալիս ֆրանսերեն*):

— Այո, պարոն, այսպես ուղիղ գնացեք և տասը բոպեում կհասնեք:

Պատանին գնում է իր ճամփան. ես էլ՝ իմը: Բայց դրությունս նույնն է: Գլուխս ցավում է: Վազում եմ, քրտնած, շնչասպառ. շարժումիս արագությամբ ուզում եմ ինձ տանջող խնդիրները արագ լուծել: Հիմարություն: Զգում եմ, որ վերջերս ուղղակի հիմարացել եմ: Էլ ինչ երեխայական բաներ ասես մտքովս չի անցնում: Ես ասում եմ, եթե այստեղից մինչև փողոցի եզրը հարյուր քայլից ավելի լինի՝ 12 ֆրանկը կգտնեմ: Եվ չափում եմ այդ տարածությունը: Բայց վախենալով, որ հարյուր քայլի հույս չկա՝ քայլերս մանրացնում եմ… և դուրս էգալիս հարյուր քայլ և հինգ: Մի վայրկյան ուրախանում եմ. հետո կատաղում եմ վրաս և անցնում ուրիշ հիմարությունների:

Նորից Սեն-Ֆրանսուա հրապարակն եմ: Գոնե ուրիշ տեղ գնամ. չլճանամ միևնույն տեղը. այս ի՞նչ կախարդական շրջան է, որ ընկել եմ դուրս չեմ գալիս: Բայց ահա մի տեսարան: Մի խումբ պատանիներ ու աղջիկներ ալպյան զգեստներով ու ցուպերով իջնում են Ռյու տյու Բոդեից*):

Կանգնում եմ որ նրանց դիտեմ: Չունենալով սեփական ուրախություն՝ ուզում եմ ուրիշինը դիտել և գոնե հավատալ, զգալ, որ աշխարհի երեսին ուրախություն կա: Ի՛նչ առույգ դեմքեր են. կատաղությունս գալիս է, չեմ կարողանում ջերմանալ նրանց ուրախությամբ: Մաղձս շարժվում է: Ալպերն են գնում մի երեք-չորս օր անց կացնելու: Նախ երկաթուղով կսլանան մինչև լեռների ստորոտը, հետո սիրուն արահետներով կբարձրանան դեպի հավիտենական սառույցները, կդիտեն լճերի հայելին՝

կարապանման ամպերի ստվերի մեջերն ընկած. սարերի հովը սրթսրթալով կփռփռացնի աղջիկների ժապավեններն ու թաշկինակները: Օ՜խ, օ, օ՜խ և հազար ա՜խ: Ապա այն մտածկոտ, թուխ-թուխ եղևնիներն ու սոճիները պղնձե բներով, ապա այն թունդ կակաչները, կաղնիների ու խոտերի մեջ բոցերի պես վառված: Սիրուն կերգեն, կծիծաղեն, կճաշեն, կսիրեն, կհոգնեն, հանգիստ արքայավայել կքնեն խոտերի ու ծառերի մեջ, առողջ, անհոգ ինչպես անտառի եղնիկներ: Իսկ ե՜ս... է՜հ, ինչացո՞ւ եմ ես, ինչացո՞ւ, քանի գրոշ արժեմ ես:

Նրանք անցնում են իմ մոտով. շիկահեր գերմանուհիներ, անգլուհիներ են և բարձրահասակ պատանիներ: Երկնային զորություններ... Գալաչյանը: Սպրդնում եմ. ուզում եմ գայլի պես փախչել, ընկնել անտառների խորքերը՝ բայց ուշ է: Ինչպես չճանաչեցի նրան ալպյան զգեստներով: Լղարել է, բայց այդպես ավելի դուրալի է: Առատ մազերը սև օձերի պես կախվել են ծոծրակից և ընկել մեջքին կապած պարկի վրա: Մելամաղձոտ է նրա ժպիտը կամ ավելի լավ է՝ նրա ժպիտը թաթախված է մի բնական ու մշտական մաղձության մեջ, որ նրա սև թավիշ աչքերի թարթիչներից ուղղակի կաթում է: Սեղմ ու համեստ ժպիտ ունի նա. աչքերը գետնին է: Ի՞նչ գործ ունի այս հայի լավը օտարների մեջ: Տեսավ ինձ. առանցսպասելու իմ բարևին, լուրջ բարևեց ինձ և անցավ: Նայում եմ հետևից քայլվածքն էլ իրեն հատուկ դուրալի անկանոն է: Ոչ մի սեթևեթ գիծ չկա նրա շարժուձևի մեջ:

Հանկարծ կողքովս, առանց ինձ նկատելու, անուշադիր դեպի իմ կողմը՝ թևիս կպչելով արագ անցնում է Ճզմանյանը: Նա էլ ալպյան զգեստ ունի: Վազում է հետևից և հասնում գնացողներին: Ահա մոտեցավ օրիորդ Գալաչյանին և նրան ինչ-որ բան տվեց, որ երևի նրա պատվերով գնել էր վերի խանութում:

Ուրեմն նա էլ է գնում սարերը*)... Սիրտս քիչ է մնում ճաքի: Այդ զզվելի արարածը, որի ցփրռ, սակաճաշակ դարձվածներն ու պատմությունները ակամա լսել եմ տղաների շրջանում, որ ամեն կնոջ, աղջկա վրա նայում է պազշոտ, լրբենի աչքերով… Թյո՜ւ, նա էլ է գնում այդ միամիտ և մաքուր խավի հետ: Աստված իմ, ինչու կյանքը սիրում է այս զայրացնող հակադրությունները աչքս կոխել. ի՞նչ է ուզում խեղճ, մեղավոր հոգուցս: Ա՜խ, ինչքան հակադրություններ կան այս աշխարհում: Ահա այս կապուտակ, պայծառ երկինքը, այս հրաշալի օրը. ինչ մեծ հակադրություններ են իմ մռայլ, տանջվող հոգուն: Ինչքան մեջս ցանկություն և եռանդ կա ապրելու, բայց ինչպես փակ են կյանքի բոլոր ճամփաները: Դառնացած շարունակում եմ ձանձրալի ճամփաս:

Գնում եմ, կարծես ընկած լինեմ լեռնային հանքերը, ու կարծես դեմ առած սառ քարին ոգորում եմ, տանջվում. իսկ ոսկի արևի տակ դուրսը նրանք են… ուրախ, զվարթ, առողջ… օ՜խ, ես ձեր հերն անիծեմ, ձեր հերը, ձեր հերը... Ասեք, ի՞նչ անեմ, ինչ անեմ. տիկին, ի՞նչ անեմ:

— Ինչպե՞ս, պարոն, հարցնում է կանաչի տանող կինը, որ հետս գալիս է:

— Ոչինչ,— մռմռում եմ քթիս տակ և անցնում: Տարօրինակ հիմարությունները մի տեսակ խաշխաշի տեղ եմ գործածում. զայրույթս մեղմելու, թմրեցնելու համար: Բայց գլուխս ցավում է, ճաքում է միշտ միևնույնը մտածելուց և լարվելուց: Երևի մեջս մի բան պատրաստվում է. շուտով կխելագարվեմ կամ ջղային ցնցումներ կստանամ: Հոգիս ինչքան ուժ ուներ պրկվելու և արիություն պահելու՝ պահեց: Ասես անդնդի գլխի զառիվեր տեղ կանգնեցրելեն ինձ և մի ահագին ժայռի բեկոր կապել մեջքիս: Քարը ձգում է տանում դեպի անդունդ. իսկ ես ջանում եմ ինձ պահել և ձգում եմ դեպի վեր: Բայց ուժերս սպառվում են, պետք է տեղի տամ: Իսկ թե տեղի տվի... պրծավ... անդունդն եմ:

Հիմի զգում եմ, որ տեղի պիտի տամ: Բարեպաշտս, որ հանձն է առել ձգել, քարը պահել՝ արդեն սնանկանում է: Հիմի պայման է կապում անկման մեջ. մի փոքրիկ տարածություն զիջում է, որ տեսնի վերջը ինչ դուրս կգա: Այդ փոքրիկ տարածությունը Սերոբյանն է: Բարեպաշտս համաձայն է նրանից 12 ֆրանկ ուզելու: Եվ ժայռի բեկորը ինձ տանում է Սերոբյանի մոտ:

Զարմանալի բան. սիրտս չի դողում և ոչ էլ քաշվում եմ արած քայլիս համար: Ի՞նչ կա որ... 12 ֆրանկ պիտի ուզեմ: Գիտեմ Սերոբյանը չպիտի հուսա, թե այդ դրամը հետ կստանա. ես էլ պիտի տանջվեմ մինչև տալ կարողանալս: Բայց ինչ անեմ: Շատ էլ բարեպաշտս քիթը կախել է: Կարիքն ստիպում է. չանելուս վերջը անդունդն է: Գողություն հո չպիտի անեմ:

Արագ բարձրանում եմ Սերոբյանենց աստիճաններով: Ի՞նչ կա չպիտի հավատա, թող չհավատա: Հոգիս կրակը կգցեմ կտամ և այն ժամանակ կհավատա: Զանգահարում եմ. դուրս է գալիս բարի պառավը:

Ախ դուք պարոն Սերոբյանի՞ն եք ուզում. նա գնաց Ինտերլակեն:

— Ե՞րբ:

— Այս առավոտ:

— Այս առավո՞տ... Ինտերլակե՞ն... և ինչո՞ւ չգնա Ինտերլակեն, հը՞... Լավ տեղ է Ինտերլակեն... Ցտեսություն, տիկին:

Գլորվում եմ աստիճաններից գնդահարի նման:

Ինտերլակե՛ն. ի՛նչ զարհուրելի անուն: Մեկ լա՛վ մտածիր, Ինտեր-լա-կեն: Որքա՛ն հեռու է ինձնից ահռելի տեղը:

Ուրեմն իջա՛ մինչև Սերոբյանից դրամ խնդրելը: Դեպի անդունդ: Տանը չէր, բայց միևնույն է, վճռեցի հո: Լա՛վ: Հիմի ո՞ւր ես գնում, պարոն Ինտերլակեն:

Հոգնած եմ և քաղցած. գրպաններիս հացը հրապուրում է դեպի ճաշ: Եվ ճաշի էլ ժամ է: Տուն գնալ չեմ կարող. արգելված է.

անախորժ, եթե ոչ մի բան ավելի: Մնում է քաղաքից դուրս գամ և գազանի նման անտառում ճաշեմ: Եվ բռնում եմ գազանների ճամփան... դեպի անտառ: «Ճաշ՝ անկումից առաջ», մտածում եմ: Այո՛, սրանից հետո գոյությունս լիովին բախտի քմայքին է հանձնվում: Այսօր մի կտոր հաց կա, իսկ գիշե՞րը, վա՞ղը…

Բայց հացը չի ուրախացնում ինձ: Երեկ քարերն էի ուզում լիզել սովից. այսօր ապահով եմ. բայց մի այլ սարսափ կանգնած է առաջս: Ի՛նչ խայտառակություն, եթե հանկարծ դժոխքի տանտիկինը բանը գանգատի հասցնի: Եվ կանի էլ. մնաց չորս օր ու կես: Այդ որ միտքս է ընկնում, դողս բռնում է: Թակարդն ընկած մկան դրություն. խուսափել չկա. նավթն ածել են ու պիտի այրեն:

Սրտիցս մի օղակ բարձրանում է վեր՝ բռնում կոկորդս խեղդում: Ջղայնանում եմ: Եվ վազ եմ տալիս դեպի Սենիայլ: Ախր ո՞ւմն է պետք այս իմ թափառումները:

Անտառում չկարողացա հացս վայելել*: Միտքս հոգնած ընկա թառամած խոտերի վրա ու քնեցի՝ աշխատելով ստահակներից հեռու լինել և չնկատվել*:

Բոսիակի կենցաղ եմ վարում, բայց աշխատում եմ ինձ համոզել, որ դեռ մինչև այդտեղ չեմ իջել:

———

Հետևյալ առավոտ, երբ զարթնեցի, նկատեցի որ աշխարհքը նույնն է: Աչքերս երկար ժամանակ փակ շուռ ու մուռ եկա տեղի մեջ, կծկվեցի ու անշարժացա, թե ինչ է քնեմ, չզարթնեմ, չեղավ:

Աչքերս մտածումից ու հոգսից չռած բացվում են:

Ո՛չ... քեզ հանգիստ չկա. 12 ֆրանկ և հաց գտիր:

Այսօր ախորժակս խիստ է: Ամբողջ մի սոված օր ձգվում է առաջ, ոնց որ դժոխքի պատկերը քրիստոնեի առաջ: Բ ը՛ ռ ռ: Հոդված գրեմ՝ հիմարություն է, էլ ուշ է: Նամակ գրեմ՝ նվազ հիմարություն է, բայց հիմարություն է: Հեռագրեմ—փող որտեղից: Փող լինի՝ այսօր վաղը դդում գլուխս կպահեմ. թողած հողե գլուխը: Եվ քանի որ գիտեմ հնար չկա գլուխս պրծացնելու՝ չեմ ուզում մտածեմ: Գլուխս տրաքվում է՝ միօրինակ մտքերի լարումից: Հոգնա՛ծ եմ, շան պես հոգնած:

Հոգեկան կյանքս այնքան տեղի է տվել մարմնականիս*), որհենց մի բոպե ոտքս շեմքից դուրս եմ դնում դեպի փիլիսոփայական աշխարհը, կարիքը փեշիցս քաշում է և ցույց է տալիս մարմնական աշխարհիս բանտը:

Աստված իմ, քանի՛ ամիս է, տարի է թողել եմ հոգեկան աշխարհը: Կյանքս դառել է մի առարկա, առտնին հիմար հոգս, ապրուստի նեղ խնդիր: Անցյալ տարի էլի կռվում էի մի կերպ. մի կտոր հաց գցում էի գազան ստամոքսիս ռեխը և հանձնվում իմ սիրած գրքերին: Իսկ հետո գրքերս ծալեցի, ծախեցի, ընկա հացի ետևից: Ո՛չ, էլ ես մտավորական չեմ, այլ ստամոքսական: Ես մի ողորմելի սոված պարկ եմ, որ պետք է հացով լցնել:

Չորս օր հետո դատավճիռս է*: Ինչու՞ չեմ ասում մահավճիռս: Վեր եմ թռչում անկողնից՝ մարմնական նեղություն զգալով: Լվացվելու կարիք չկա. տանտիկինը հոգացել է այդ մասին՝ միանգամայն ավելորդ համարելով լվացումը ինձ համար: Լվացարանի պարագաները արդեն փոշոտված են, ինչպես բարձիթող արած սենյակի կարասի. չի սրբում, չի հոգում: Ես տնտեսապես մեռած լինելով նրա համար՝ մարդկայնապես էլ արժեք չունեմ նրա աչքում: Այդ հարվածը ընդունել եմ և հաշտվել. քանի որ ավելի մեծերը գալու են սրանից հետո. աչքս այն կողմն է:

Այսօր երկու սպասում ունեմ. մեկը մեր տան նամակատուփն է, մյուսը՝ փոստը. երեք մարդու հերթ է այսօր նամակս ստացած լինելու. Թիֆլիսի բարեկամս, Երևանի ծանոթս և Բաքվի ընկերս. դրությանս մեջ մտած. փող փոստից հանկարծ. մնացածը հայտնի է. քաղց մինչև մի որևէ անակնկալ: Ի՜նչ համեմատություն երեկի և այսօրի մեջ.— երեկ վիշտ ունեի՝ հաց էլ ունեի. իսկ այսօր... բ ը ռ ռ:

«Մոնիզմ»-ը վերցնում և դուրս եմ գալիս՝ առանց քաշվելու խոհանոցի գազանից. փառք աստծո, մեր զինադադարը չորս օր էլ ունի:

Նամակատուփին եմ նայում — ոչինչ չկա. ինչպես միշտ, թեկուզ ճաքի. չկա ու չկա: Իջնում եմ փոստ, «ոչինչ չկա», ասում է պաշտոնյան և անցնում մյուս բաժինը՝ ինչպես միշտ:

Չէ, մեռած եմ ես. պետք է գնալ մի տեղ պառկել և աչքերը խփել . զուր եմ կարծում թե գոյություն ունեմ: Մոռացել են, արհամարհում են ինձ, ինչպես սելի փոշի: Ահա այս ոտիս տակիփոշին գուցե այս բոպեիս խոսում է հետս. ի՞նչ իմանամ. նրանք էլ այդպես: Նոր եմ հասկանում այդ: Եվ ինչքան այսպիսի բաներ կան աշխարհիս երեսին, որ մարդիկ չեն հասկանում: Քանի հարյուր հազար գրքեր կան լցված և լցվում են այս բոպեիս այն մասին, թե մարդը մարդու եղբայրն է, մերձավորն է: Այո, մերձավոր է, երբ երկուսն էլ մի պատառ հաց ունեն բռնած ձեռքներին՝ և հաշիվ չունեն իրար հետ: Բայց հենց որ մեկը ինձ նման՝ ձեռքի պատառը կորցրեց՝ նրանց հոգեբանությունը իսկույն փոխվում է.

Մի կտոր հացի հիվանդությո՛ւն — անհատակ անդունդ*):

Եվ հիմի այն մարդիկ, որոնց վրա ես հիմարաբար հույս եմ դրել՝ ամուր փակել են իրենց քսակներն ու… լռել: Դրանից հետո ուզում ես մեռիր, ուզում ես ճաքիր: Լավ եմ սկսում ճանաչել նրանց, բայց ուշ է արդեն: Ընկել եմ ծուղակը:

Էլի ես ուզում միևնույն փողոցները շրջել շան պես, պարոն Քաղցածյան: Ապա ի՞նչ. ուրիշ ինչ բանի եմ պետք:

Է՜հ, թափառիր, գուցե ծայրը գտնես: Ու թափառում եմ նույն փողոցները: Գիշերից դեսը ոչինչ չեմ կերել: Ոսկի հացս հատավ, ինչպես բախտավորություն: Էլի սովը ընկել է փորս: Մի բան պիտի անել. միշտ միևնույն բանը, և միշտ էլ միևնույն ապարդյունը:

Հանճարեղ միտք… Եկ այս «Մոնիզմ»-ը ծախեմ, ի՞նչ կա որ… հետո կգնեմ նորը, կտամ Սերոբյանին, կասեմ. «ներեցեք, ձերը կորցրել եմ»: Այո, մի հինգ վեց օրը մի բան երևի ձեռս կընկնի: Անշուշտ կընկնի. սատկելու հո չե՞մ:

Արագ քայլերով գնում եմ ռուսների կողմը: Հիշում եմ ձմեռս Բյունիոնի կողմերն ապրող մի հրեա հին էժան գրքեր էր առնում և ռուս ուսանողներին ծախում: Տունը մոտավորապես գիտեմ, բայց ոչ հաստատ: Գնում եմ և զգում, որ լավ բան չեմ անում: Ի՜նչ նվաստություն, իսկապես, **ուրիշի գիրքը** ծախել. թեև ճիշտ է, որ կարող եմ փոխարենը նորն առնել: Բայց ի՜նչ նվաստություն. այս ո՞ւր է տանում մի փոր հացը: Ընկնում եմ, ընկնում առանց նկատելու և ինչքան հե՜շտ:

Ահա դեմս մի ռուս ուսանող է գալիս: Շեկ մորուքը, լավ զգած բուրդի պես շրջանակել է նրա գունատ, մոմեղեն դեմքը:

— Ներեցեք, մի փոքրիկ հարց:

Մի զույգ շագանակագույն փոքրիկ աչքեր ակնոցների տակից լուրջ և հանգիստ ինձ են նայում: Ուրեմն շարժուձևն ու տարազս սրա համար ոչ մի արտաքո կարգի հանգամանք չունեն:

— Ի՞նչ եք կամենում:

— Այստեղերք մի ինչ-որ հրեա է կենում, որ հին գրքեր է առնում, արդյոք նրա…

— Նա հիմի Ժնև է,— խոսքս կտրում է ուսանողը և լուռ նայում աչքերիս:

— Այո, ըմ, Ժնև: Լավ: Բայց ես կարևոր գործ ունեի հետը: Այ այս գիրքը…

— Ախ «Մոնիզմ»-ը. բայց դուք կարող եք մի այլ բուկինիստի դիմել: Քանիսի՞ կտաք:

— Չգիտեմ քանիսի տամ:

— Դե դրա փողոցի գինը հայտնի է. 30 սանտիմ: Ուզում եք գովեք. երևի կարիք ունեք:

— Լավ:

Գիրքը տալիս եմ և 30 սանտիմիս հետ միասին հետ դառնում դեպի Սեն-Ֆրանսուա, իմ կախարդական հրապարակը, որտեղից եթե դուրս գամ, ինչ խոսք, որ տիեզերական համակարգությունները կխանգարվեն:

Պաշարողական դրությո՜ւն: Երեսուն սանտիմով երեք օր պետք է քաշ տալ:

———

Այնուհետև երկու օր իզուր նայեցի նամակատուփի ծակից, ձանձրացրի՝ փոստի պաշտոնյային, հառաչեցի «Հառաչանքի դռան» մոտ, չափչփեցի բոլոր գլխավոր ու անհայտ փողոցները, քնեցի Սենիայլի անտառում,— կյանքս մնաց նույնը, միշտ միևնույնը:

Սենյակիս պայմանաժամի նախընթաց երեկոն էր:

Հիմի նստել եմ Սեն-Ֆրանսուա հրապարակում: «Չէ,— մտածում եմ,— կորա… կորա այս անգամ: Ճակատագիրը մինչև հիմա հեռվից էր հարկադրում իմ տանջանքները. այժմ դեմ առ դեմ պիտի դուրս գանք և սկսվի իսկական հավատաքննությունը...»

Ի՞նչ պիտի լինի վաղը: Վաղը ոչինչ չի լինի, միայն կսկսվի: Նախ ինձ դուրս կանեն տանից, հետո մնացածը ինձնից ջոկ կգրենդատարանին, այդ դավը ես չեմ տեսնի. ինձ մի քանի օրից հետո կոչնագիր կգա՝ ներկայանալու… դատարանին:

Վեր եմ թռչում տեղիցս և վազում դեպի Գրան-Պոն: Ջերմս սկսվում է: Հնարներ եմ մտածում. բայց ինչ-որ բոլոր հնարները վերդիր եմ արել, զուր է: Դրանից մեկը Ճզմանյանն է, հայ ուսանողներից նա է մնացել քաղաքում: Բայց Ճզմաճյանից դրամ ուզել ինքնին մի տանջանք է: Նվաստության տանջանք: Չէ, մինչև այդտեղ չեմ իջնի:

Է՜հ, չես իջնի՝ գնա՛ դատարան: Դատարան կգնամ. ոչ թե բանտն է վախեցնում ինձ, այլ այն արհամարհանքը, որ ունի շվեյցարացին դեպի անդրամ օտարերկրացին: Օ՜, այդ հյուրատիրոջ արհամարհանքը դեպի աղքատ, ձրիակեր հաճախորդը: Շվեյցարիան էլ մի հյուրանոց է:

Ինչ խայտառակություն օտարների և մերինների առաջ:

Չէ, կգնաս Ճզմաճյանի մոտ: Եվ ինչքան զզվում եմ այդ մտքից, այնքան մի զորեղ, կոպիտ ձեռ մղում է ինձ դեպի նա: Եվ ժամանակ էլ չկա հոգեկան մաքառման: Շուտով կմթնի և նա տանից դուրս կգա: Պետք է շուտ վճռել. գնա՞լ թե չէ: Դեռ համաձայն եմ մինչև նրա դուռը գնալ ու գուցե ճամփին հետ կենամ այդ նվաստ մտքից: Նա այժմ տանը կլինի, իսկ եթե չլինի՝ մի քառորդից հետո պանսիոնում կլինի: Ամենահարմար վայրկյանները փրկություն ձեռք բերելու: Վայրկյանը փախցրի՝ պրծավ, կորած եմ: Օֆ, ի՞նչ զարհուրելի փորձություն է... Ես դրամ ուզեմ Ճզմաճյանից. Եւ մի՛ տաներ զիս ի փորձութիւն[4], աստված իմ:

Բարեպաշտս բողոքում է, պատռտվում, պոռչտում է ինչպես միտինգում մի հռետոր, որի կուսակցության թանին թթու են ասել:

Խուլ մի բան կա մեջս. չգիտեմ մարդ է, գազան է, թե տարերային մի բան՝ մղում է ինձ խավարի միջից դեպի այդ քայլը: Մղում է անողոք ճիրաններով: Չգիտեմ թե ո՞վ է իմ ղեկավարը. բարեպա՞շտս, թե տանտիկինը:

Միայն գիտեմ, որ դրանք շարունակ իրար դեմ կռվում են ինձ տիրապետելու համար և շարունակ մեկն ու մեկը հաղթում է և ինձ առաջ քշում:

Մի անսովոր ահ է մտել մեջս: Դատարանի կամ նման հալածանքիահ: Մինչև հիմի այդ բոլորը տեսություն էր, խորհրդանյութ: Ահա հնչում է ժամը, որ այդ բոլոր մտայինը խորանա, զանգվի և դառնա իրողություն: Գայլի պես առնում եմ որսորդների հոտը և մահի դողը լցվում է մկաններիս մեջ սառը ջրի պես:

Հեղեղի, կայծակի, փոթորկի— տարերքի մոտալուտ վտանգն եմ զգում. բարեպաշտս պոչը իրան է քաշել. տարերային գրոհ է գալիս վրաս: Եվ մեջս տարերայինը սկսվում է, խոյանում նրա դեմ, ինձ մղում է առաջ:

Մատս Ճզմաճյանի բնակարանի զանգակի վրա է: Վճռական եմ դառել:

Զարմանալի բան. ինչքան շուտ եղավ այս բանը. ես արդեն Ճզմաճյանի սենյակի առջև եմ:

— Բարև ձեզ,— ասում եմ մտնելով նրա սենյակը և իսկույն վհատվում և զայրանում, երբ ականջիս սեփական ձայնս իբրև օտարի է գալիս: Այդ նշանակում է որ շփոթված եմ և ողորմելի:

— Փարև,— պատասխանում է Ճզմաճյանը սառնորեն, քթի տակ և կիսաձայն, նայում է աչքերիս և իսկույն հայացքը հատակին հառում: Հետո մատիտը մատներով խաղացնելով նայում է պատուհանին:

Ինքս ինձ ուտում եմ: Եվ այնքան զայրացած եմ, որ խոսք չեմ գտնում նպատակս նախաբանելու, միջանկյալներ բերելու, վերջապես մեղմացնելու իսկական խնդիրքիս մերկացումը և կոպիտ ձևը:

Ճզմաճյանն էլ տհաճ կացության մեջ է. նա էլ չի ուզում լռությունը խզել, որ ասելիքս կարճ կապեմ:

Չի հրավիրում նստելու: Ինչ-որ բան է որոնում սեղանի տակ. չի գտնում: Վեր է կենում տեղից և դռան մոտենալով ում որ ձայն է տալիս.

— Մաթմուազե՛լ (լ-ն կոպիտ), կոշիկներս բերե՛ք:

Սևահեր, ցորնագույն երեսով մի աղախին, որին հազիվ եմ դռան ճեղքից նկատում, կոշիկները ներս է դնում շեմքի մոտ և հեռանում:

Ճզմաճյանը բոբիկ վեր է կենում և կոշիկները տանելով բազմոցի մոտ՝ դիմում է ինձ.

— Ինձի ներեցե՛ք, անհետաձգելի քործ մ’ունիմ. «սոսիետեդեզ էթյուտիան ֆրանսեզ»-ին* պիտի երթամ: Փան մ՚ունեի՞ք, ըսեիք:

Էլ ուշ է: Առաջին այցս է Ճզմաճյանին: Ռեխս ցույց տալու չէի գնացել և ոչ էլ իր կոշիկները տեսնելու: Պետք է հանձնվել:

— Պարոն Ճզմաճյան, մի խնդիրքով եմ եկել ձեզ մոտ:

Ժպտում եմ. բայց դեմքս չի ժպտում: Զգում եմ որ հայացքս ավելի քան լուրջ է:

Ի՜նչ ստորություն արի*):

...Եկել եմ ձեզնից 12 ֆրանկ պարտք ուզելու, ուղղակի վերջացնում եմ խոսքս, որ ազատվեմ:

— Ստակ չի կա, թշփախտափար. կցավիմ: Պաքուեն հարուստ մը եկած է այս օրերս, հայրենակիցդ է. Աղեքսանթրյան կըսեն. Ուշի կկենա. հասցեն տղաքը կիմանան. անոր դիմե:

Նայում եմ այս ճղճիմ լակոտին, նրա դժկամակ հայացքին, տափակ քթին, նրա «անոր դիմե» եզակի դարձվածքին և զետինն եմ մտնում նվաստացման զգացումից: Կարծես մի սառը քամի երեսիս է տալիս: Սթափվում եմ արած հիմարությունիցս, ինչպես գինովությունից:

— Պարոն Ճզմաճյան, ինձ ոչ թե կարիքը, այլ հիմարությունը բերեց այստեղ, ես եկողը չէի: Ձեզանից մի մազ պոկելն իսկ հարամ է:

Եվ դուրս եմ գալիս: Մեջքս դաղվում է հետևից իր վրա զգալով Ճզմաճյանի հայացքը:

Դուրս եմ գալիս և սանդուղքների վրա մազերս պոկում: Ի՞նչ թշվառություն, ո՞ւր եմ ընկել: Առաջ սովի ճանկն էի տանջվում, հիմի սկսվեց ստորացումների շարքը: Ո՞ւր գնամ, տեր աստված, որտեղ մաքրեմ էս նվաստացումը: Հիմի այս բարոյական խոշտանգումը բավական չէ՝ տանը սպասում է զարհուրելի գազանը: Օրը մթնում է. և ես ոչ ոքի չպիտի գտնեմ պարտք ուզելու: Դուրսը մնալ անկարելի է. պետք է գնալ տուն և… հանձնվել: Գուցե մարդկայնության մի նշույլ խաղա և այն հրեշի մեջ: Հո չի կարելի այսպես լլկել մեկին: Մեղք եմ. ես էլ մարդ եմ: Կմտնեմ տիկնոջ մոտ, կխոսեմ, իր լեզվով կբացատրեմ:

Շվեյցարիայում ամեն օր գործածվող գրքի՝ Ավետարանի ուսմունքը, կաղաչեմ որ ներողամիտ լինի, մի քիչ էլ սպասի: Երբեք կյանքիս մեջ այսպես մենակ և անօգնական չեմ եղել: Ուժերս սպառվում են, իսկ կարիքն ու հալածանքը աճում, ինչպես ուռճացող սև ամպ: Ինչ պիտի լինի վերջս: Եթե հանկարծ ընկնեմ հիվանդանամ… ի՜նչ սարսափելի բան: Սուս, դրա մասին մի մտածիր: Եվ դեմքս փախցնում եմ այդ զարհուրելի պատուհանից: Չէ՛, հիվանդանալու տեղը չէ:

Մտնում եմ սենյակս այն մտքով, որ վերջին գիշերն եմ անցկացնում այստեղ:

Չնայած որ տասը սանտիմի հաց եմ կերել, որ վերջին ամիսներիս սովորական ճաշն է ու ընթրիքը՝ բայց բարոյապես այնչափ խորտակված եմ և առաջիկա փոթորիկը այնպես է ինձ ճնշել, պոկել ներվերս հիմի սկսում են թուլանալ և քունս տանում է:

Օ՛ֆ, շուտով քնեմ ու չիմանամ թե կա աշխարք, պարտք, նվաստացում և քաղց:

———

Առավոտը շատ ուշ զարթնեցի, թեև ամբողջ գիշերը քնած էի, բայց միտքս երազներով տապկվում էր: Այնպես որ զարթնելիս ջարդած զգացի:

Հագնվեցի…կախաղանից առաջ: Նվաստություն համարեցի տնից փախչել:

Դատապարտյալի սպասումով աչքս դռանն է, որ գան ու տանեն:

Իսկ մինչ այդ վիճակս եմ կշռադատում:

Այսօր հաց չկա: Դարձյալ սովը ժանգոտ ու խստահայաց ծիծաղով նայում է աչքերիս մեջ: Դրա վրա ավելացրու և անհայտ դատավճիռը:

Դուռը ծեծում են: Դեմքիս վրա կոտրած ու ջղային ժպիտ է գալիս: Եվ մի ձայնով, որի մեջ զգացվում է սրտիս բաբախը՝ ծեծողին հրավիրում եմ ներս:

Տանտե՛ր… Զինվորական զգեստներով (զինվորակոչ է և նա օրերով չի այցելում իմ տունը) ցցվում է առաջս: Խիտ, սև ունքերըմիացած են քթի վերնամասում, և ավելի մռայլ տեսք են տալիս նրա խոժոռած դեմքին:

— Նստեցե՛ք, պարոն,— դիմում եմ նրան:

Չի լսում ինձ, և կանգնած դռան առջև՝ հարցապնդում է.

— Ձեր ամիսը լրացել է և քսան օր անցել, ինչու՞ չեք մաքրում հաշիվը:

Ձայնը խիստ է և սառը. ես աշխատում եմ գոլ ձայնովս բարի խառնել:

— Բայց դուք գիտեք, որ, պարոն…

— Ձեզ հինգ օր ժամանակ էր տված,— ընդհատում է նա ուժեղ բարիտոնով:

— Ես սպասում եմ դրամի:

— Դուք սպասո՞ւմ եք, գիտեմ ինչպես եք սպասում,— ներս է մտնում տանտիկինը — joli practigue!* Հաց չունի ուտելու: Դիտմամբ լամպը վերցրի, թե տեսնեմ ինչ է անելու և ի՜նչ դուրս եկավ. մոմի դրամ չունի: Երկու ամիս է ճերմակեղենը չի լվացվում: Սպասում է:

— Քաղեցեք ոսկիք այս էտրաժեներից*,— մռմռում է տանտերս և գնում խոհանոց՝ մնացածը թողնելով իր կնոջը:

— Տիկին, դուք պիտի իմանաք, որ…

— Ի՞նչ պիտի իմանամ, ես ամեն բան գիտեմ: Դուք չե՞ք, որ տիկին Մերիմեի պանսիոնում 20 օր ճաշել եք և չեք վճարել: Ես պիտի իմանամ որ… joli practigue!

— Այդ սուտ է, գոռում եմ ես: Եվ ինչ իրավունքով եք ինձ զրպարտում:

— Այստեղ աղմուկի տեղ չէ,— ներս է մտնում տանտերս,— տվեք ձեր պերմին և դատարկեցեք սենյակը այսօր ևեթ: Մա՛րշ:

— Պարոն, դուք վիրավորում եք ինձ: Սենյակը կդատարկեմ, բայց պերմին չեմ տա. պարտքս կվճարեմ, երբ դրամս ստանամ. կարող եք հետս գալ մինչև նոր բնակարանս:

— Դուք գիտե՞ք Շվեյցարիայում ինչ է անփողների ու փող ուտողների վիճակը:

— Ես անփող չեմ. ես փողս ուշ եմ ստանում:

Բայց զգում եմ, որ ձայնս հաստատ չէ: Ախր սուտ եմ ասում, որ փողս ուշ եմ ստանում:

Տանտերս դաժան ծիծաղով ցույց է տալիս սենյակիս դուռը:

— Գնացեք հենց այս րոպեիս. բայց ձեր հասցեն բերեք, թե չէ կդիմեմ գաղտնի ոստիկանության: Թյո՛ւ:

Եվ դուռը շրմփացնելով դուրս է գնում:

Հարվածները այնքան շատ են, որ մարմինս ընդարմացել է, դեռ չի զգում: Ուրեմն դատարանի չի դիմել. սպասելու է, որ վճարեմ: Այդ մեկը լավ է: Իսկ վիրավորա՛նքը... չէ իհարկե... ես ճամփից դուրս եկած եմ… ով ասես կվիրավորի ինձ, զարմանալի չէ: Ես կորցրել եմ մարդկային իրավունքներս. դրամ-ունակությունս:

Գզզզված շան պես դուրս եմ գալիս տանից:

———

Հին քաղաքամասում, մարդկային աչքից հեռու խուլ փողոցներ կան, ուր մի քանի օր առաջ վարձու սենյակներ տեսա: Այնտեղ եմ գնում:

Ահա նրանցից մեկը:

Այս որջը էժան պիտի լինի: Եվ քանի որ ես էլ դուրս եմ եկել մարդկային հասարակությունից՝ գնամ այնտեղ ապրելու: Ներս եմ մտնում: Բայց միջանցքը այնքան մութ է, որ հետ եմ դառնում դեպի դուռը և կանգնում: Մի կորամեջ պառավ կին լնգլնգալեն աչքը գետնին գալիս է դիմացի մայթից՝ կաթնամանը ձեռին: Եվ քանի որ ինձ չի տեսնում, գիտեմ երբ մոտենա ինձ պիտի դիպչի. սկզբից ճամփա եմ տալիս: Մոտովս անցնելիս հանկարծ գլուխը բարձրացնում է և նայում ինձ: Ես ձայն չեմ հանում: Նա շարունակում է նայել. հետո դեմքը ծամածռում է. դա նրա ժպիտն է:

— Դուք օտարակա՞ն եք, պարոն:

— Այո՛, տիկին: Ասացեք խնդրեմ այս վարձու սենյակը ումն է:

— Դուք սենյա՞կ եք ուզում, պարոն:

— Այո:

— Ուրեմն եկեք իմ հետևից:

Հետևում եմ նրան: Նրա կուզը ծուռ կոճղի նման օրորվում է մութի մեջ և հալվում միջանցքի զայրագին խավարում:

— Տիկին, որտե՞ղ եք:

— Եկեք, եկեք, մի՞թե չեք տեսնում:

— Ոչինչ չեմ տեսնում:

Նա զարմանում է և կանգ առնում:

— Բարեհաճեցեք բարձրանալ:

Ես շոշափելով բռնում եմ սանդուղքի ճաղը և խարխափելով բարձրանում: Անտանելի օդ է: Ինչ-որ հոտեր, անհայտ ծագումով, ով գիտե որ սատանի քունջ ու պուճախից դուրս եկել լցվել են միջանցքը, որ լուռ է, ինչպես գերեզման: Միջնադարյան խոնավություն է բուրում մութ պատերից: Ո՞ւր եմ գնում, ո՞ր հեքիաթական մութ աշխարքները: Եվ ո՞ւր է տանում ինձ այս դժոխքի կարապետը

Պառավին էլ չեմ տեսնում. միայն նրա ոտնաձայնն եմ առնում այս եգիպտական բուրգի մեջ: Ահա կանգ է առնում: Լսվում է բանալիի չխկոցը և դռան հնադարյան եղանակավոր ճռնչյուն: Դուռը բացվում է և մի հիվանդ, գունատ լույս վախվխելով ընդառաջ է գալիս պառավին:

— Մտեք ներս, պարոն:

— Որտե՞ղ է սենյակը,— հարցնում եմ ես, որ գոնե ձայնս լսեմ այս անօրինակ բավիղում:

— Իսկույն կտեսնեք: Առաջ արիք խնդրեմ:

Մտնում եմ նախասենյակը, որ մի կիսախավար գուբ է, լույսը օճորքից: Կաղամբի և գոլորշու հոտը մատնում են խոհանոցը, որ հիմի ավելի պարզ երևում է նախասենյակի ծայրին: Ես որ միշտ գլխի եմ ընկնում հյուսիսն ու հարավը՝ արդեն կորցրել եմ. այնքան դես դեն շուռ ու մուռ եկանք: Վերջապես պառավը բաց է անում մի դռնակ և՝

— Ահա սենյակը, պարոն,— ասում է այնպիսի ձայնով, որ կարծես մի թանկագին հոգեպահուստ է ցույց տալիս: Ի՜նչ սենյակ. տարօրինակ և անհրապույր մի արկղիկ է դա, որի օճորքը մի սանդուղք է, շեղակի տնկած հենց գլխիս վերև ու կպչում է մազերիս: Կոպիտ անկողին, կարծես որդեր ածած՝ կվանի մինչև անգամ քունը գլխին մարդուն: Լվացարանը մի ափսեաչափ լական է, դույլ չունի, որ կեղտոտ ջուրը դեն ածես: Իսկ պատուհանը կլոր մի անցք է փայտե կապի մեջ դրած, որ նայում է դեպի անարև բակը, ուր ինչ-որ անիվներ են դրած՝ երևի կառագործի արհեստանոց կա այն կողմը:

Սի՜րտս պատռվում է…

— Ի՞նչ արժե,— դիմում եմ պառավին, որ բերանը պինդ փակած, ներքին շրթունքը քթածայրին, աչքերը դեմքիս վրա հառած արտահայտությունն է գուշակում:

— Այս սենյակին միշտ 6 ֆրանկ են վճարել: Թանկ չէ, պարոն: Հոգալը, ջուրը ինձնից է. ամիսը՝ երկու անկողնի սպիտակեղեն: Եվ սենյակը տեսնում եք՝ շատ մաքուր է: Առաջ այստեղ պարոն Գարգանիոլին էր կենում, երիտասարդ իտալացի, շատ գոհ էր ինձնից:

Սենյակը զարհուրելի է դագաղի պես. բայց էժան է ինչպես գերեզման: Հառաչում եմ և համաձայնվում:

Կաթվածահոտ ժպիտը ծամածռում է պառավի դեմքը և նա մոտենալով անկողնին՝ հետ է անում վերմակը:

— Իհարկե, կհամաձայնեք, պարոն: Բարի եղեք մի րոպե նայելու այս վերմակին. տեսնո՞ւմ եք ինչ մաքուր է:

Բայց ես չեմ նայում վերմակին:

— Լավ, տիկին, բանալին տվեք: Ես իրերս իսկույն կբերեմ: Ինչպե՞ս իջնեմ սանդուղքից:

— Սանդուղքից իջնելը կսովորեք. առ այժմ վառեցեք այս լուցկին: Եվ տալիս է մի տուփ, որի մեջ հինգ լուցկի կա:

— Պարոնը կարծեմ իտալացի է:

— Ոչ, հայ է:

— Եվ ի՞նչ գործի: Ուսանո՞ղ: Այդ շատ գեղեցիկ բան է... հը՞, հը՞: Բժի՞շկ:

— Ո՛չ, բնագետ:

— Բնագե՞տ. շատ գեղեցիկ բա՛ն: Այս րոպեիս ես ջուր կածեմ սափորը, որ գալուս լվացվեք: Բնագե՞տ, այո, շատ գեղեցիկ, շատ գեղեցիկ:

Պառավը հիմար և բարի մեկն է երևում, թեև Եվայի պես աղքատ: Ինչ արած, այդ էլ մեղմ շունչ է, այս դառն ու դաժան իրականության, այս գուբի մեջ: Կարելի է սրան հարևան ապրել: Գնում եմ շորերս բերելու:

Շորերս հավաքելիս (շոր էլ ասում եմ), զզզված չեմոդանս դարսելիս, աչք եմ ածում բոլոր անկյուններն ու կետերը, որոնցվրա նայել եմ և հուսահատ խորհել վիճակիս վրա: Մնաք բարով, մենակի և հուսահատի ընկերնե՛ր. ես գնում եմ ուրիշ անկյուններ ու կետեր որոնելու: Մնաս բարով, սեղանավոր և ոսկի մարդ, ահա գնում եմ խավարտչին աշխարհքները ջոջի պառավի մոտ: Հառաչում եմ և դնում չեմոդանս, բոլոր կայքս. ճղված շապիկներ, անլվա թաշկինակներ, դասախոսության տետրակներ, զզզված գրքերս ու կուտակված մանր-մունր թղթեր ու նամակներ, սպիրտի լամպս, որ ահա քանի ամիս է չի վառվում մի բաժակ թեյի համար: Ահա և (ավաղ փառացս) օրիորդ Գալաչյանի տոմսակը իմ սենյակում մատիտով գրած… ո՛վ հեռու և երջանիկ ժամանակներ, երբ մարդ էի ես — դրամ ունեի ուրեմն ուսանելու, ճաշելու, ծիծաղելու և խելոք լինելու կամ երևալու իրավունք ունեի:

— «Պարոն Վ-յան, խնդրեմ այս երեկո ինձ մոտ գաք և ձեզ հետ բերեք բոտանիկի սիստեմատիկան... Հարգանոք՝ Ա. Գալաչյան»:

Երեք տարի առաջ էր դա... Երե՛ք դար:

Չքավորությունը խունացրեց զգեստներս, թթվացրեց տրամադրությունս, դեղնեցրեց դեմքիս գույնը, թառամեցրեց ծիծաղս ու լռեցրեց սրախոսությունս, ես փախա այն ցավից և նա էլ չկանչեց: Կորցրել էի հրապույրս: Իսկ հիմա մոռացված եմ արդեն:

Հառաչում եմ և «շորերս» տեղավորում զզզված չեմոդանս: Վերջացրի: Թեթև բեռ է. ինքս պիտի տանեմ: Տասը րոպեից ամեն ինչ պատրաստ է. բանալին հանձնում եմ տանտիկնոջ, հասցես թողնում և կալվածքներս ձեռիս ճամփա եմ ընկնում դեպի մութ աշխարհքները:

———

Երբ առավոտը զարթնեցի՝ չէի իմանում ժամի քանիսն է: Ըստ երևույթին վաղ էր: Տան բակը, որ իմ լուսամուտն է նայում, մռայլ էր ինչպես նեղ ձոր և չէր իմացվում՝ օրն արև էր, թե ամպ:

Մեռելային լռությունը տրտմեցնում է սիրտս. իսկ ցածրիկ, խոնավ առաստաղը, չարդախի սանդուղքը գերեզմանաքարի պես ճնշում է կուրծքս: Պետք է վեր կենալ և դուրս փախչել, արևի տակ: Բայց սովի ուրվականը դառնացնում է հոգիս, և վիատ ու հուսահատ շուռ եմ գալիս տեղիս մեջ, փորձում նորից քնել:

Հանկարծ միտս ընկավ գանգատը. կարծես օձը խայթեց. վեր թռա տեղից և սկսեցի արագ հագնվել: Վերմակիս ծվենները, որ գուլպայի տեղ էին ծառայում՝ կեղտոտվել էին: Կտրեցի վերմակի աստառի մնացյալից երկու ծվեն և փաթաթեցի ոտքերիս: Այնքան կյանքս զուրկ է ուրախություններից, որ այդ փաթաթանը իր թարմ շոշափումով հույս է տալիս ինձ: Ես լվացվում եմ առանց սապոնի և ուզում եմ դուրս գալ: Խոհանոցից դուրս է գալիս պառավը և ինձ կանգնեցնում.

— Պարոն*, եթե կաթ ուզում եք վերցնել՝ կաթ բերողին ասեմ բերի:

— Խնդրեմ, խնդրեմ, տիկին, վերցրեք ամեն օր քսան սանտիմի:

Խնդիրս վճռվեց: Ուրեմն այս մութ աշխարհքներում էլ կյանք կա... ուրեմն իմ կյանքը այս մութն աշխարհքներումն է:

— Եթե իմանայի այսօր կվերցնեի:

— Ափսոս. իսկապես լավ կլիներ:

— Եթե ուզում եք իմ վերցրածից տաս սանտիմի տամ այսօր:

— Եթե կարելի է, խնդրեմ:

Ետ եմ դառնում սենյակս և սպասում: Փրկվա՜ծ եմ, փրկված ինչպես թակարդն ընկած մուկ. էլ ինձ նավթով չեն այրի:

Հինգ րոպեից հետո տաք կաթը հոսում է ներքին գրգռարաններիս մեջ՝ ինչպես հիվանդությունից հետո վրա հասնող առողջություն, և ես երգում եմ:

Բայց ձայնս նվում է հիվանդի ձայնի պես և ես ամաչելով ընդհատում եմ:

Օ՜, կյանքի աղբյուր, օ՜, ձյունափրփուր:

Կաթ… սկսում եմ արտասանել ես... Բայց արցունքները խեղդում են ինձ, և ես լռում եմ:

Եվ գավաթը ծծելով մոր ստինքի պես՝ մատով սրբում եմ մնացորդը, լպստում և դուրս գալիս:

ՏԱՐԵՐԱՅԻՆ

(Էջ 255)

Գրված է, հավանաբար, 1908 թ., երբ Դեմիրճյանը ուսանում էր Ժնևի համալսարանի վերջին կուրսում: Այդ մասին հեղինակը վկայում է. «1905-ին գնացի Շվեյցարիա, մտա համալսարան, բնագիտական ֆակուլտետը, միաժամանակ մանկավարժության և գրականության ֆակուլտետները: Դրանք կարճ կուրսեր էին, և ես ավարտեցի 1908 թվին:

Ժնևում կրկին ձեռք վերցրի ջութակը, մտնելով կոնսերվատորիա, որը շուտով թողի, քանի որ այնտեղ ավարտելը պահանջում էր շատ երկար ժամանակ և հրաժարումն գրականությունից: Այստեղ գրեցի մի վեպ՝ «Տարերային»: Դա մի չքավոր ուսանողի քաղցն է՝ օտար, բուրժուական հասարակության անտարբեր միջավայրի մեջ: Վեպի բովանդակությունը սոցիալական էր, նույնը և «Սեփականություն» պատմվածքինը: Դա ժնևյան քաղաքական գրականության ընթերցողների, լոյալ և մասամբ էմիգրանտ ռուս ուսանողական շրջանի, քաղաքական խնդիրների մասին զեկուցումներին և դիսկուսիաներին այցելելու հետևանքներ էին: Առանձնապես ատելի էին ինձ շվեյցարական բուրժուազիայի կուշտ, անասնական կենցաղն ու արհամարհանքը դեպի «անարխիստ» (ինչպես իրենք էին ասում) «էտրանժիները» (օտարները), մասնավորապես դեպի ռուսները, ռուսաստանցիները, իտալացիները և այլն» (ԳԱԹ ԴՖ, 1 769, էջ 7):

Վեպը, ինչպես անվանում է հեղինակը (ինքնագրում՝ «Վեպիկ»), թերավարտ է և ակնհայտորեն ունի որոշ ինքնակենսագրական գծեր:

ԳԱԹ ԴՖ N 450 պահվում է մեկ ինքնագիր, որի վրա նկատվում են հետագայում կատարած որոշ փոփոխություններ:

Մեզ անհայտ պատճառներով ցայժմ չի տպագրվել. Տպագրվում է առաջին անգամ, ինքնագրից: Հաշվի են առնված հեղինակի կատարած փոփոխությունները: Փոփոխված տեղերում նախնական ձևակերպումները բերում ենք որպես տեքստային տարբերություններ:

1 Ֆրանսիական ականավոր մտածող, լուսավորիչ Ժան-Ժակ Ռուսսոն (1712–1778) մեծ տեղ է հատկացրել բնությանը մարդու դաստիարակության հարցում: Այս գաղափարը նա զարգացրել է հատկապես «Էմիլ կամ դաստիարակության մասին» գրքում (1762):

2 Նկատի ունի գերմանացի հայտնի բնագետ Էռնստ Հնքլի (1834—1919) Der Monismus, Glauben sberenntniss eines Natur forschess գիրքը (1892):

3 Ավետարանի գրաբար տեքստի աղավաղումն է («Յանուն հօր՝ և որդւոյ և հոգւոյն սրբոյ», Աւետարան ըստ Մատթեոսի):

4 «Հայր մեր» աղոթքի մի դարձվածքն է ձևափոխված («Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն», Աւետարան ըստ Մատթեոսի):

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էջ 257, տ. 9—Փնտրում եմ գուլպաներս, որ վերմակիս պատռված աստառից էր, փաթաթում եմ ոտքերիս և կոշիկներս...

257, տ. 23—Նախկին

258, տ. 7—Իջնում եմ դեպի փոստ: Ահա և շուկան:

258, տ. 10—Դիտմամբ այնպես լուրջ ու ցրիվ հայացքով նայում եմ ներս, կարծես ամեն բանից կուշտ եմ:

258, տ. 29—Ծառայողը ճանաչում է ինձ, բայց ազգանունս դեռ չի սովորել:

259, տ. 16—Որ աշխարհ կգային, եթե մի շաբաթ, գոնե մի երեք օր հաց ունենայի ուտելու:

259, տ. 29—Ուրեմն ես մի տաշեղ եմ, ընկած ծովի հեղհեղուկ ալիքների մեջ և ուզում եմ վիճակս որոշել: Ավա՜ղ, տաշեղի վիճա՜կ...

260, տ. 3—Այդ անգութ, նողկալի և պրոզայիկ արարածը հալածում է ինձ, ինչպես խղճմտանքի ձայն: Համարյա վազում եմ: Ոչ, քավթառ, չես հասնի: Ապա, արի, ապա, քավթառ. դե, հասիր տեսնեմ, հերդ անիծած: Արագ քայլվածքը ուժ է տալիս ինձ և զվարճացնում: Ապա, հասիր քավթառ, հասի՛ր, հասի՛ր , հա՜ասիր, քավթառագույն, քավթառապետ, քավթառաշուք: Եվ քայլելիս կրկնում եմ քավթառ, քավթառ, քավթառ:

Զգում եմ, որ դեմքիս արտահայտությունը հանդիսավոր է. ուժ եմ առնում և ժպտում: Չէ, անպատճառ վիճակս պետք է որոշեմ, անպատճառ, անպատճառ,անպատճառ, քավթար... Չէ՛, ես բանաստեղծ եմ: Ո՛չ թե հաց՝ այլ հրաշակերտներ կստեղծեմ, կհորինեմ, ձեր հերը կանիծեմ, շան որդիք:

Լեմանը իր կապույտ անկողնում նազում է և մեղկանում:

Լեմանը վաղուց զարթնել և խաղում է իր կապույտ անկողնում:

Էջ 260 , տ. 21—Ոտներիս տակ խշխշում է լճափի մանր խիճը, որ ածած է լճափի ճեմելիքին: Հատ-հատ զույգեր ու զբոսողներ գալիս են դեմս ու մոտովս անցնում: Մեկ-մեկ նայում եմ նրանց և ամեն անգամ մտածում, որ նրանք նախաճաշել են արդեն: Ախ տեր աստված, և ինչ դրություն է սա: Մի՞թե ուրիշ բան չկա մտածելու:

261 տ. 16—Հաճելի խոնավ շունչ է դա, անուշ մի բուրմունք, որ քաշում է դեպի նավակ, դեպի լճի զբոսանք:

262, տ. 5— Ժանդարմը առաջ է գալիս և կանգնում շղթայից այն կողմ, որից այս կողմ սեղմում է մոտեցող բազմությանը:

262, տ. 7—Բարեկամ, հեռու տար շկոլադը. ես զզվում եմ այդ բաներից:

263, տ. 13—Բայց այդ կմախքը ապահովել է. երևի հասասուի մեկն է, քեֆդ քյոք պահի:

266, տ. 2—Որտե՞ղ է ձեր զերեզմանը:

266, տ. 21 —Հողեմ գլուխդ, գեղեցիկ հղացում:

370, տ. 3—Բայց եթե պրկվածքը բաց թողնի՝ բոլորովին կթուլանամ: Արագ քայլելով գնում եմ Սերոբյանի մոտ: Նրանից մի ֆրանկի հույս կա: Գնում եմ և քանի մոտենում եմ նրա փողոցին…

Հիշում եմ ինչպես մեր տանը հաց էին թխում. այդ հանդիսավոր օրը, երբ առավոտից վաղ, կես գիշերից սկսած, մեր հարևանները, մեր տանը հավաքված հունցում էին և…

275, տ. 9—Եվ էլ հրաժարվում եմ նկարագրելուց:

275, տ. 12—Դեռ քննություն տանք, տեսնենք...

283, տ. 27—Օձի թույնի պես, որ իբրև վրեժ կամ հրաշալի մի գործ մի օր պիտի երևան գա և գուցե դրա համար տանում եմ ամեն բան և չեմ ուզում մեռնել:

Շատ եմ վիրավորվել կյանքիս մեջ և դա սովորություն է դառել ինձ համար։

285, տ. 7—Հույսս թղթակցությունն է, բայց տրամադիր չեմ գրելու։ Եթե հաստատ հույս ունեմ նստեմ հոգիս ձութը գցեմ՝ գրեմ. բայց հլա մի ասա հայ լրագիր։ Այսօր Թիֆլիսի բարեկամս մտածելու և վճռելու է ինձ փող ուղարկելու. ժամանակը իմ հաշվով վեց օր է դառնում։

289, տ. 8—Ի՞նչ անեմ— Ահա կանգնեցի։

290, տ. 11—Գնա՛, հիմարի կտոր, գնա՛։

Տե՛ր աստված. մի ճար արա։

291, տ. 1—Ես էլ վանդակ ընկած գազան եմ և մոռացել եմ որ ելք չկա։

291, տ.12—Համարյա վազում եմ,— ո՞ւր, չգիտեմ։

291, տ. 22—Ասում եմ. մի՞թե հնար չկա այստեղից Սեն-Ֆրանսուա հասնելու, գնալու, կրկնում եմ, շուռ եմ տալիս ֆրանսերեն։

292, տ. 7—Քսանի չափ ուժեղ, ուրախ պատանի աղջիկ։

293, տ. 9—Այդ ատելի, զզվելի արարածը, որի ցփըռ, տաճկաճաշակ խոսքերը, դարձվածքներն ու պատմությունները ակամա լսել եմ համալսարանում, տղաների շրջանում, որի համար կին, աղջիկ չկա, որին նայում է պագշոտ, լրբենի աչքերով…

295, տ. 15—Չորս օր ապարդյուն անցան որևէ գումար գտնելու։ Եվ ումնից պիտի գտնեի քաղաքում բացի Ճզմաճյանից և օրիորդ Գալաչյանից ուրիշ հայ ուսանող չկա. ռուսների մեջ մի երկու ծանոթ ունեմ. բայց նրանց տեղը չգիտեմ. գիտենամ էլ գրոշ չարժե, նրանք էլ ինձպես աղքատ են, ինչպես երկնքի թռչունը։

Չորս օր։ Ով կարող է հասկանալ այդ միակերպ, տաղտկալի չորս օրը։ Ոնց որ ատամի ոչ սուր ցավ, որ չի ցնցում, բայց մզմզում է, տևում, հոգիդ է հանում։ Կյանքս նման է մի հարթ անապատի, հարթ, անբնակ, տխուր և անողոքորեն միօրինակ։ Իսկ թե ինչպես անցկացրի այդ չորս օրը տնտեսական տեսակետից, այդ միստիքական գաղտնիք է։ Ասենք շատ պարզ է…

295, տ. 17—Շարժումներս բոսյակային են. դեռ դուրս չի գալիս այդ բառը։ Տեսնենք վերջներս ինչ կլինի։

295, տ. 33—Հոգեկան կյանքս այնքան տեղի է տվել նյութականիս, որ հենց մի բոպե ուզում եմ ինձ էս փիլիսոփայական աշխարհը…

296, տ. 11—Կամքս արդեն թուլանում է մեջս։ Այ, երեկ զիջեցի և գնացի Սերոբյանից 12 ֆրանկ ուզելու։ Իսկ հիմի կսկսվի մի նոր զիջում։

297, տ. 9—Նա դադարում է, ընկնում է անդունդ։ Ինչքան որ մոտ են երկու հարուստ մարդիկ, նույնքան նրանք իրարից սարեր ու ձորեր, անդունդներով բաժան են և հեռու են, երբ մեկը նրանցից նյութապես մեռնում է։

301, տ. 6—Եվ աշխատում եմ ժպտալ։

301, տ. 8—Ի՜նչ ստորություն արի... և ասելիքս շուտ վերջացնում եմ։

302, տ. 16—Օ՜ֆ, շուտով քնեմ և չիմանամ թե աշխարհք կա. ընկնեմ երազների ոլորտները, մոռանամ ինձ էլ, պարտքս էլ, սա զարհուրելի կյանքն էլ։

303, տ. 18—Ոչ, պարոն. վճարեցեք և այսօր-վաղը դատարկեցեք սենյակը, որ արդեն վարձու է տված:

309, տ. 9—Պարոն, երևի մի քանի սու կունենաք ձեզ մոտ: Ամսականը հիմի տայիք լավ կլիներ. ես էլ այս սենյակիս հուսով եմ համարյա:

— Այս բոպեիս չկա: